

Lucy 118

U-28

Lucy ✓

118

Drury

1133

2000

2272

2272

N 798

118

PA

ԲԺՅԵՊԵՏ ՎԱՀԱՆ ԱՐԺՐՈՒՆԻ

35061



ԺԱՆՏԱԽՏ




110



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԿՐՏԶԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՏՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ ԳԼԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՆԻ

1897

40409693 67235 80970669

20102506



118-97

Дозволено цензурою Тифлисъ 8-го апрѣля 1897 г.

28-117

Ժանտախտը ժողովրդի աչքին մի հազար
զլխանի ճիւղէ երեւում, որը ամէն ինչ խոր-
տակում է իր ճանապարհին, որը մահ է տա-
րածում իր շուրջը եւ որին ոչ մի ոյժ չի կա-
րող դիմադրել, որովհետեւ ցասումն ըն-
դունուում է իբրեւ երկնքից ուղարկած պատու-
հաս եւ ձեռները խաչած անճնատուր է լինում
իր ճակատագրին:

Երբ այսպիսի մի զաղափար է տիրում մի
երկրում, այդ երկիրը կորած է, որովհետեւ
ամէն ընդդիմադրութիւն անօգուտ է համար-
ւում:

Անցան այն ժամանակները, երբ լաւ էր
համարուում թագնել ժողովրդից խօլերայի
կամ ժանտախտի մօտենալը եւ նոյն խակ երկ-
րում յայտնուիլը, երբ իշխանութիւններն ար-
գելում էին բժիշկներին խօսել այս հիւան-
դութիւնների մասին, որպէս զի ժողովուրդը
սարսափի մէջ չընկնեն: *

*) 1892 թ. խօլերայի համաճարակի ժամանակ Մշակի-
մէջ լոյս տեսան մեր յօդուածները, արտատպուեցան Ս. Էջ-
միածնում առանձին բրօշիւով խօլերայի մասին, վերնա-

Ի՞նչ էր լինում այս սխալ քաղաքականութեան հետեւանքը:

Այն, որ ժողովուրդը զգուշացրած չլինելով, շարունակում էր ապրել իր հակառողջական պայմանների մէջ, որոնք պարարտ հող են ներկայացնում ամէն տեսակ տարափոխիկ հիւանդութեան համար: Իսկ երբ այլեւս դժուար էր լինում ծածկել թշնամի ներկայութիւնը, այն ժամանակ յանկարծ սարսափը տիրում էր ամբողջ երկիրը եւ յուսահատութեան մէջ էր քրցում անպատրաստ ժողովուրդը: Համաճարակների պատմութիւնը մի անգահն կոյտ է ներկայացնում այդ քաղաքականութեան կործանարար հետեւանքների:

Բարձրագոյն հաստատուած մասնաժողովի մշակած կանոններից մէկը հետեւեալն է. «յայտարարել առանց քացառութեան պաշտօնական կառավարչական ազդարարի» մէջ բո-

գրով մի քանի հազար օրինակ եւ տարածուեցաւ ժողովրդի մէջ. հետեւեալ 1895-ին, Թիֆլիզի Հ. Հրատարակչական Ընկ. Նոյնպէս տակից իմ Խօսերա գիրքը 5000 օրինակ եւ ցրուեց կարծեմ մեծ մասամբ ձրի: Միեւնոյն ժամանակ Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը տպագրեց իմ «Խրատները» Թերթիկներով չորս լեզուով արեւի քան 40000 օրինակ:

չոր հաստատ տեղեկութիւնները ժանտախտի մասին, հաղորդելով միեւնոյն ժամանակ եւ մասնաժողովի ձեռ արած միջոցների մասին: Պէտք է պատրաստել ժողովրդին, զիտակցօրէն վերաբերուել դէպի սպառնացող աղէտները եւ այժման դէպքում՝ պէտք է անկեղծօրէն հասկացնել ժողովրդին ժանտախտի խկութիւնը, նրա ոյժը եւ նրանից պաշտպանուելու միջոցները:

Մի թշնամի հետ յաջողութիւնով կռուելու համար անհրաժեշտ է լաւ ճանաչել նրա ոյժերը եւ իմանալ, թէ ինչ գէնքով է պատերազմում նա, որպէս զի հնարաւոր լինի պատրաստուել նրան դիմադրելու: Միեւնոյն ժամանակ պէտք է լաւ ըմբռնել նրա թոյլ կողմերը, որ կարողանանք հարուածել այդ կողմերից:

Ժողովրդի հետ խօսելիս, երբէք չպէտք է ծածկել էութիւնը, որքան էլ անմխիթար լինի իրերի դրութիւնը. անյայտութիւնը ամբողջի համար արելի ծանր է քան ճշմարտութիւնը. պէտք է խօսել ճիշտ, կտրուկ եւ համոզիչ կերպով, որպէս զի ժողովրդի մէջ կաս-

կած չմնայ այս ինչ կամ՝ այն ինչ կէտի վերա-
բերմամբ:

Այս սկզբունքներով մենք ղեկավարուել ենք
1892—1893 թւին խօսերայի համաժողովի
միջոցին գրելով թէ լրագրական յօդուածներ եւ
թէ քրօշիւը այս հիւանդութեան մասին, եւ այն
տարիների յաջողութիւնը վստահութիւն է
տալիս մեզ նոյնն անել այժմ՝ ժանտախտի վե-
րաբերմամբ:

Այս գրքոյկը քաժանուում է երկու մասի,
առաջի մասում մենք զբաղուում ենք ժանտախ-
տով, իսկ երկրորդում խօսում ենք պահպա-
նողական միջոցների մասին:

ԲԺԶԿ. Վ. ԱՐԾՐՈՆԻ.

Մարտ 1897.

Թիֆլիզ.



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ժ Ա Ն Տ Ա Խ Տ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I

ԺԱՆՏԱԽՏ

ԻՆՉ է ԺԱՆՏԱԽՏԸ. — ԺԱՆՏԱԽՏԻ ՏԱՐԱԾՈՒԵ-
ԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ. — ԿԵՂՏՈՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՔ-
ՐՈՒԹԻՒՆ.

Ժանտախտը մի տարափոխիկ հիւանդու-
թիւն է, որը միշտ համաճարակի կերպարանք
է ստանում, այսինքն տարածուում է երկ-
րից երկիր, մեծ զոհեր տանելով:

Ժանտախտը, ինչպէս ասում են, կրպո-
ղական հիւանդութիւն է, որը օրէ մը ղէ
անցնում, այլ փոխուում է հիւանդի ու մեռա-
ծի կամ նրանց շորերի և առհասարակ իրե-
ղէնների միջոցով: Քանզի ղէ կարող ժանտախտի
Լոյսը մի քանիսի մէջ քանիսը քանիսը, մի խօս-
քով նա չի թռչում օդի միջով ինչպէս սը-

խալմամբ կարծում է ժողովուրդը: Եթէ ժանտախտը յանկարծ երևում է մի երկրում, մի քաղաքում կամ մի գիւղում, պէտք է լաւ իմանալ, որ նա ~~անպարփա~~ ներս է բերուած վարակուած երկրից եկած մարդկանց կամ ապրանքի հետ: Այսպէս նա գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, երկրից երկիր անցնելով, կարող է իր ծննդեան տեղից տարածուել հեռու աշխարհներ: Նոյն ձևով տարածուում է և խօլերան: Ժանտախտը ամէն դարերում սոսկալի կոտորածներ է արել: Մարդիկ սարսափով են արտասանում նրա անունը: Իր կործանիչ արշաւանքների միջոցին նա ամայի է դարձրել իր շուրջը մարդիկ գլուխներն առած փախչում էին ահաբեկ թշնամուց և ապաւինում լեռներն ու անտառները: Այս տագնապի եթէ ոչ ամենագլխաւոր պատճառը, գոնէ գլխաւոր պատճառներից մէկն այն էր, որ ժողովուրդը բոլորովին անտեղեակ էր թէ ժանտախտի իսկութեանը և թէ ինքնապաշտպանողական միջոցներին: Իսկ ամէնքը պէտք է լաւ համոզուին, որ ժանտախտն էլ, խօլերանն էլ հիւանդութիւններ են, որոնցից կարելի է պաշտ-

պանուել և հիւանդանալիս էլ բժշկուել:

Այժմ յայտնի է, որ ժանտախտը, ինչպէս և խօլերան կեղտոտ կեանքի, վատ սրնունդի և առհասարակ հակառողջական պայմանների արդիւնք են, որ նրանք բուն են դնում կեղտոտ երկրներում, հարուածում են վատ, անառողջ կեանք վարող ժողովուրդներին:

Ընդհակառակն այն երկրներում, որտեղ ժողովուրդը հասկացել է, որ ժանտախտը Աստուծու պատիժ չէ, այս հիւանդութիւնը չի կարողանում մտնել, իսկ եթէ մտնի էլ չի կարող մեծ վնասներ հասցնել:

Ինչի՞նչ:

Որովհետեւ ժողովուրդը, ազատ լինելով նախապաշարմունքներից, գիտակցօրէն է վերաբերուում դէպի աղէտը և գործ է դնում նրա դէմ այն միջոցները, որոնք թելադրում է գիտութիւնը:

II

ԺԱՆՏԱԽՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

ԺԱՆՏԱԽՏԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԸ ԵՒՐՈՊԱ-
ՅՈՒՄ.— ՍԵՒ ՄԱՀԸ.— ԺԱՆՏԱԽՏԻ ԲՈՅՆԸ.—

ԺԱՆՏԱԽՏԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ
ԵՒ ԿՈՎԿԱՍՈՒՄ: ԱՅԺՄԵԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԸ.

Ժանտախտի սկիզբը կորչում է դարերի
խորքերում: Մի քանի վստահելի տեղեկու-
թիւններից երևում է, որ ժանտը նկատուել է
200-300 տարի Գրիստոսից առաջ: 542 թ.
Գրիստոսից յետոյ արդէն մենք գտնում ենք
մանրամասն նկարագրութիւն մի համաճա-
րակ ախտի, որը յայտնի է Իւստինիանի ժան-
տախտ անուանով: Այս հիւանդութիւնը եգիպ-
տոսից տարածուել էր միջերկրական ծովի ա-
փերը և սաստիկ կոտորած էր արել Պար-
սից երկրում: Կլզինները, քարայրները, լեռ-
ների գագաթներն անգամ վարակուել էին:

Այս տարուց յետոյ ժանտախտի ուրիշ
շատ համաճարակներ է տեսել աշխարհը, բայց

XIV դարի ցաւը, սե տառերով յիշատա-
կուած է մարդկութեան պատմութեան մէջ:
1337 թուականին երեւցաւ Չինաստանում
մի սոսկալի հիւանդութիւն, որը ամէն ինչ
լափելով, Հնդկաստանի, Պարսկաստանի (և
երեւի Կովկազի) ¹ վրայով անցնում է Ռու-
սաստան, իսկ այստեղից Լեհաստան, Գեր-
մանիա, Ֆրանսիա, Իտալիա, Սպանիա: Իսկ
1349-ին նա երեւաց Անգլիայում: Այս հի-
ւանդութիւնը յայտնի է պատմութեան մէջ
ուե Ժանտախտ, աւ ճահ անուններով: ² Մի
գաղափար տալու համար թէ ինչ անլուր ոյժ
ունէր այս համաճարակը, առաջ բերենք մի
քանի թուեր բժ. նեւտերի աշխատութիւ-
նից: Վենետիկում և Լոնդոնում մեռել են
այս ժանտի միջոցին 100,000 հոգի, Սիե-
նում 70,000, Ֆլորենցիայում 60,000, Պա-
րիզում 50,000, Գերմանիան կորցրեց 1 մի-

1 Չարմանալի է, որ մեր պատմագրերը չեն յիշա-
տակում այս համաճարակի մասին, դոնէ մենք ոչինչ չգտանք
այդ մասին ա. Երեցեանի «Чума въ Закавказьи», հետազոտու-
թեան մէջ.

2 Անտարակոյս մեր ժողովրդական անէծքը «սեւ ցաւ»
այս ժանտախտին ակնարկում:

լիոն 245,000 մարդ, իտալիան՝ իր ազգա-
բնակութեան կէսը, իսկ վենեցիան երեք
քառորդը: Մինչև 1350 թուի համաճարակը կո-
տորեց Եւրոպայում 25 միլիոն մարդ, այ-
սինքն ամբողջ ազգաբնակութեան քառորդը:
Պապ Կլեմենտ V-ի ժողոված տեղեկութիւն-
ներին նայելով, սե ցաւը կոտորել է բոլոր
երկրներում մօտ 43 միլիոն մարդ!

Չհասկանալով այս սոսկալի հիւանդու-
թեան տարածուելու պայմանները և նրա
խսկութիւնը, չհասկանալով, որ ժամանակա-
կից հակառողջական պայմաններն էին այս
ահռելի կոտորածի պատճառը, յուսահատ
ամբոխը մեղադրում էր Հրէաներին, որոնք
իբր թէ թունաւորում էին ջրերը, և իրանց
կատաղութիւնը խեղճերի վրա թափում:

Այսպէս է լինում, երբ ամբոխը չի ճա-
նաչում աղէտի իսկական բնութիւնը և պատ-
ճառը!

Հետեւեալ դարերում ժանտախտը կրկին
յայտնուում է Եւրոպայի զանազան երկրնե-
րում, բայց արդէն XVII դ. ախտը հանգում
է Եւրոպայի կենտրոնում, այցելելով երբեմ-
նապէս ծովեզերեայ նահանգները: Հիւսիսային

Եւրոպայում ժանտախտը 1657 թուից այլ
ևս չի երևացել: Անգլիայում վերջին հա-
մաճարակը տեղի ունեցաւ 1665-ին, երբ
միայն 1,680,000 մարդ մեռաւ: 1681
ից յետոյ ժանտախտը այլևս չի յիշատակ-
ւում Եւրոպայում: Ճմարիտ է, նա այնու-
հետեւ երբեմն մոռնում է Եւրոպայ նաւերի
վրայով, բայց երբէք չի տարածուում երկրի
խորքերը, այլ մնում է միայն ծովեզերեայ քա-
ղաքներում, որտեղ և հանգչում է: Սակայն
Ռուսիայում նա շարունակում է կոտորած-
ներ անել: Պէտք է յիշել Նոյնպէս Մոսկուայի
1770 թուի համաճարակը, որը սե գոյնե-
րով է նկարագրուում:

Տասնևիններորդ դարում ժանտախ-
տը երևացել է Մարսէլում (1820-ին), սահ-
մանափակուելով ծովեզերեայ նահանգով, Նոյ-
նը եղաւ և իտալիայում 1815-ի համաճա-
րակը, որը սահմանափակուեց Նոջա (Noja)
նահանգով: Երկու դէպքերումն ևս հիւան-
դութիւնը ներմուծուած էր նաւերով վարա-
կուած երկրներից (Սիրիայից և Զմիւռ-
նիայից):

Այս համաճարակներից յետոյ ժանտախ-

տը շարունակում է երեւալ այն երկրներում միայն, որտեղ առողջապահական դրութիւնը նպաստում է նրա զարգացման: Այս երկիրներն են Ասիան, Աֆրիկայի ծովեզրը, Թիւրքիան և Ռուսաստանը: Եւրոպան երեւի ընդ միշտ ազատուեց այս ախտից շնորհիւ առողջապահական դրութեան բարելաւման: Եթէ այսուհետեւ այնտեղ երեւայ էլ ժանտախտը, նա անկարող կըլինի մեծ զոհեր տանել և թէ ժողովուրդը և թէ կառավարութիւնները զինուած կըգտնի գիտութեան տուած զօրեղ զէնքերով:

Տասնութերորդ դարի վերջերում և ներկայ դարի սկզբում ժանտախտը յաճախ այցելել է Աֆրիկայի ծովեզրը, Թիւրքիան և Ռուսիան: Սակայն Թիւրքիայումն էլ ցաւը վերջանում է 1839 թուին, իսկ 1837-ին նա յանկարծ բռնկում է Օդեսայում, որտեղ նա խեղդում է շնորհիւ վօրօնցովի եռանդուն գործունէութեան և վերջին ժամանակներս երեւում է վօլգայի ափերին, Աստրախանի մօտ (վետեանիայի ժանտախտը 1879), սարսափի մէջ է քցում ամբողջ Եւրոպան, բայց բարեբախտաբար տեղն ու տեղը հանգչում է:

Այսպէս ուրեմն Եւրոպայի համաճարակները տեղային հիւանդութիւններ չէին, այլ եկել էին արեւելքից, գլխաւորապէս Կոստանդնուպօլսից, եգիպտոսից և Սիրիայից: Գիտնականների մի մասը այս համաճարակների սկիզբը դնում է եգիպտոսում, նրանց համար նեղոսն է ժանտախտի բուժը, ինչպէս Գանգէսը խօլերայինն է: Ասենք, որ վերջին հետազօտութիւնները աւելի յանգում են գիտնականներին դէպի այն ենթագորութիւնը, որ ժանտախտի բուժը, ինչպէս և խօլերայինը, Հնդկաստանի սրբազան Գանգէս գետն է: ¹

Աւելի հետաքրքիր են մեզ համար Թիւրքիայում, Պարսկաստանում և Կովկասում եղած համաճարակները:

1805-ի Յունուարին ժանտախտը Երզրուսումն էր և օրական 400 զոհ էր տանում:

1 Բժ. Ֆրէնսիս ժանտախտի հայրենիքը որոնում է Հնդկաստանում, Կումասօն եւ Գուրվալ նահանգներում: Միւս կողմից գէնտի կարծիքով Միջագետքը այն կենտրոնն է, որտեղից ժանտախտը տարածւում էր քս կողմի:

նոյնը յիշատակում է բժ. Տանկուանը 1807 թուին: 1810-ին ժանտախտը երեւում է Բէյ-բուլի և Բաթում, իսկ 1811-ին նա երեւում է Տրապիզոնում: Օգոստոսին այս քաղաքում մեռնում էին օրական 100—200 հոգի: Նոյն տարին հիւանդութիւնը տարածուում է Էրզրում, Ախալցխայ, Ղարս և ծովեզրով հասնում է Սամսոն:

1812-ին մինչդեռ ախտը նորից բռնկում է վրաստանում և Մենգրելիայում, նա անցնում է ամբողջ Անատոլիայի վրայով, միևնոյն ժամանակ նա շարունակում է իր կոտորածը սև ծովի ափերով և մնում է Տրապիզոնում 18 ամիս շարունակ: 1819 և 1820-ին մի քանի թեթև համաճարակներ են նրկատուում, իսկ 1824 ին ժանտախտը երեւում է նորից Էրզրումում և շրջականերում, 1825—1827-ը նա մտնում է Երևան, Էրզրումի փաշաիկում և Տրապիզոն: 1828-ին Ղարս ևս վարակուում է, ինչպէս և վրաստանի մի քանի տեղեր: Տասնվեց տարուայ դադարումից յետոյ Տրապիզոնում դարձեալ յայտնուում է ժանտախտը: Հիւանդութիւնը նորոգուում է 1831, 32, 33 թուականներին:

Իսկ 1834-ին Լազիստանը նոյնպէս բռնկում է: 1835-ից մինչև 1839-ը համաճարակը երեւում է Տրապիզոնում, Բաթումում, Սիւնուում, Զմիւռնիայում և փոքր Ասիայում: 1839 թուին նա հասնում է Գիւմրի, Ղարս և Էրզրում: 1841-ին ժանտախտը մեծ տարածութիւն է ստանում. մի կողմից նա անցնում է Արաքսը և մտնում է Պարսկաստանի սահմանները, իսկ միւս կողմից մըտնում է Թիֆլիզ: 1843-ին մի քանի դէպքեր նկատուում է Էրզրումում և համաճարակը վերջին անգամ բռնկում է բաւական զօրեղ կերպով Կարա-Հիսարում ու վանի մօտերքում (բժ. Տոլոզան): Այս է եղել վերջին համաճարակը Թիւրքիայի հողի վրա: Պարսկաստանում տեղի ունեցած ժանտախտային համաճարակները լաւ ուսումնասիրած է նոյնպէս բժ. Տոլոզանը:

Նրա հետազօտութիւններից երեւում է, որ 1830-35 թուականների համաճարակից յետոյ Պարսկաստանը երեսուն հինգ տարի ազատ է մնում, չնայելով որ Հայաստանում և Անգրիկովկասում համաճարակներ են եղել այս ժամանակամիջոցում: Միայն 1867-ին

երևում է մի օր Հայաստանում և անդրկովկասում և փոքր ի շատ է նշանաւոր ժանտախտային կետրոն Հենտիէ գաւառում Եփրատի ափին: 1870-ին ժանտախտը երևում է Ուրմիա լճի մօտ: 1874-77-ը նա յայտնուում է անկախ կերպով Բաղդադի վելայեթում իսկ 1877-78 թուականներին նա նշանաւոր կոտորած է անում Ռէշտում: այստեղ 24000 բնակիչներից, Տղուզանի ասելով, մեռնում է 2000 հոգի (Կրասոսկոու հաշուով — 3000): Նոյն թուականից սկսած մինչև 1889-ը Պարսկաստանի և Արաբքստանի զանազան անկիւններում, Մերփում, Կանդահարում յայտնուում են ժանտախտային բռնկումներ տարբեր ոյժով, բայց նրանք երբէք լայն ծաւալ չեն ընդունում և մնում են խիստ սահմանափակուած:

Ժանտախտը կովկասում.

1716 և 1717-ին ժանտախտը Անդրկովկասում և Շամախում ու շրջականներում տանում է 70,000 հոգի: Մոսկուայի մեծ համաճարակի միջոցին (1770) Վրաստանում գտնուած ռուս զօրքերի մէջ երևում է ժանտախտը և միայն Թիֆլիզում մեռնում են մօտ 4000 հոգի: 1781 թ. նա յայտնուում է Թիֆ-

լիզում, որտեղից Էրակլիյ Թագաւորը փախչում է: 1797-ին համաճարակը երևում է Գանձակում իսկ 1798 թ. նա տիրում է Թիֆլիզում: այնպէս որ Էրակլիյ մահուանը խրատել արգելուած էր նրա յուզարկաւորութեան գնալ: ¹

Այս համաճարակը նորագուել է 1802-1804-ին հասել է Գեօրգիւեսկ և Մոզդոկ (1806) և տարածուել է ամբողջ Կովկասում մինչև Ղուբան, Ստաւրապոլ: 1808-ին նա երևում է Նոզայների և Աբխազների մէջ և հասնում է մինչև Կասպից ծովը, 1810-ին ժանտախտը կրկին գլուխ է բարձրացնում Իմերետիայում իսկ նոյն տարուայ վերջին Ախալցխայ պաշարող ռուսաց զօրքերի մէջ հիւանդութիւնը տարածուում է այն աստիճան, որ քաղաքի պաշարումն վերցուում է: Հիւանդութիւնը հասնում է Թիֆլիզ, որտեղից մօտ 10000 հոգի հեռանում են այգիները և շրջակաները: Այս համաճարակը արագ տարածուում է մի կողմից մինչև Թիւրքիայի սահմանները, միւս կողմից անցնելով Կովկասեան շղթայի վրայով Էջնում է Վլադիկովկասի հովիտը:

1 Чума въ Закавказьи. Эрицова.

1824-ին ժանտախտը նորից բռնկում է Էրզրումում, իսկ 1817-ին նրան մենք գտնում ենք Երևանում, սև ծովի ափերին, իսկ 1828-ին Ղարսում: 1830—33-ին հիւանդութիւնը տիրում է Տրապիզոնից մինչև Ղարս: Վերջին համաճարակը մեր սահմաններում տեղի ունեցաւ 1843 թուին Երևանի և Ալեքսանդրապոլի գաւառներում: Յիշենք, որ մի թեթև բռնկում տեղի ունեցաւ Գանձակի գաւառի թրքաբնակ գիւղերից մէկում 1854-ին:

Այսպէս ուրեմն մենք 53 տարի է, որ ժանտախտ չենք տեսել, չնայելով որ Պարսկաստանի զանազան երկրներում հինգ վեց նշանաւոր համաճարակներ են տեղի ունեցել:

Այժմեան համաճարակը մեզ գալիս է Հնդկաստանից, իսկապէս նա սկսվել է Պակոյում որտեղից 1894-ին հասել է Կանտոն և Հոնկոնգ նահանգները: 1894-ին նա Կանտոնում 180,000 զոհ տարաւ, իսկ Դեկտեմբեր ամսին նա մտաւ Ամոյ քաղաքը, որտեղ օրական 10-20 մարդ էին մեռնում: Այժմ նա բուռն է գրել Բոմբէյում և տարածուել է Պարսից ծովի Հնդկական ափերը մինչև Սինդ:

Իսկ չորով նա հասել է Պոլսի և Անտերա: Բոմբէյի համաճարակը սկսուել է անցեալ Յուլիս ամսին, երևի Զինաստանից եկած ապրանքների միջոցով:

Ամենից առաջ նկատուել էր մկների ահագին կոտորած, որոնք համարեալ լցրել էին փողոցները: Բայց միայն Հոկտեմբերի երկուսին կառավարութիւնը սկսեց միջամտել: Բայց արդէն սարսափը ընկել էր քաղաք և ժողովուրդը փախչում էր տարածելով իր հետ ժանտախտը: Վերջին տեղեկութիւններին նայելով (Ֆրանսիական աղբւրներէից) քաղաքի բնակիչների $\frac{2}{3}$ փախել է: 821,764 բնակիչներից այժմ մնացել է միայն 300 հազար: Մենակ Պոլսն ապաստանել են աւելի քան 60000 մարդ: Բոմբէյը այժմ մի ահռելի տեսարան է ներկայացնում: Փողոցներում գիշեր ցերեկ խորոյկներ են վառում դիակներն այրելու համար, իսկ Պարսերը, որոնց կրօնը արգելում է գիակները կրակի տալ, իրանց մեռածներին դնում են զաւր-թեան աշտապահներին վրայ, որ չախկալները լափեն նրանց: ¹

1 Պաշտօնական տեղեկութիւններին նայելով Սեպտ.

Անգլիական կառավարութիւնը թէ և ուշ,
բայց դարձեալ խիստ միջոցներ է ձեռ առել
իր միւս երկիրները փրկելու համար, բոմբե-
յում, կազմուած է մի մասնաժողով, բաղ-
կացած գիտնական բժիշկներից, Մանգէր

26-ից մինչեւ Հոկ. 1-ը	հիւանդացիներ	75 մարդ	մեռելիս	45 մ.
Հոկտ. 1-ից մինչեւ 3-ը	»	78	»	53
» 3-ից » 15-ը	»	15	»	90
» 15-ից » 22-ը	»	67	»	49
» 22-ից » 29-ը	»	74	»	51
» 29-ից » Նոյ. 5-ը	»	65	»	53
Նոյեմ. 5-ից » 12-ը	»	36	»	67
» 12-ից » 19-ը	»	100	»	64
» 19-ից » 26-ը	»	253	»	173
» 26-ից » Դեկ. 3-ը	»	341	»	259
Դեկտ. 3-ից » 17-ը	»	521	»	305

Այսպէս հիւանդացիների եւ մեռնողների թիւը գնալով
աւելանում էր, չնայելով որ մեծ խմբերով ժողովուրդը փախ-
չում էր քաղաքից, Անգլիական մի քաղաքի ժողոված տե-
ղեկութեան համեմատ Սեպտ. 26-ից մինչեւ Յունիւ. 19-ը
Բոմբէյում մեռել է 9835 մարդ, Յունուար եւ փետրուար
ամիսներին հիւանդացումն եւ մահացումն շարունակում են
աւելանալ: Պաշտօնապէս մահուան դէպքերի թիւը հաս-
նում է շաբաթական 470-ի, այն ինչ մասնաւոր տեղեկու-
թիւնները տալիս են 1000—1400 մահ: իսկ փետր. 17-ից մին-
չեւ 23-ը պաշտօնական 780 մահացու դէպքեր, իսկ մասնաւոր
տեղեկութիւններով — 1200, եթէ ի նկատի առնենք, որ Բոմ-
բէյում այսօր միայն 300000 մարդ է մնացել, կը դառնանք,
որ 1000-ից մեռնում է օրական 6 մարդ, մի թիւ, որը
չափազանց մեծ է:

(այժմ մեռած ժանտախտից) իբրեւ նախա-
գահ, և անդամներից, խալկին, խանկին և
Սիւրվէյէր: Այնտեղ հրաւիրուած է նոյնպէս
ինքը երսէնը, մասնաժողովի պարտքն է բա-
ցի գիտական հետազօտութիւնները, նոյն-
պէս և ազգու միջոցներ ձեռ առնել ժան-
տախտի հետ կռուելու համար:

Ժանտախտը կարող է մօնել Եւրոպայ երկու
ճանապարհով — ծովով և չորով: Ծովի կողմից
Եւրոպական պետութիւնները և Ռուսաստա-
նը խիստ կարանտին են սահմանել բոլոր նա-

փետրուարի 24-ից (ն. տ.) մահացումն սկսում է
Բոմբէյում, թէեւ հիւանդացիների թիւը համարեա նոյն է
մնում. ուրիշ խօսքերով, հիւանդացիներից այժմ աւելի
մեծ տոկոս է առողջանում, հետեւաբար Թոյնի ոյժը պակ-
սել է: Սակայն այս նսաղումն նկատուում է միմիայն Բոմ-
բէյում, այն ինչ միւս երկրներում նա սահպանել է իւր ոյժը:

Երսէնը (Մարտի 6-ից . ն. տ.) սրսկում է իր շեջուկը
Բոմբէյում. ցաւակցաբար մինչեւ այժմ յայտնի չեն թէ ինչ
արդիւնքներ է տալիս այս բժշկութիւնը վերջին ժամա-
նակները, սակայն նշանաւոր են անգլիական Պարլամենտի
մէջ արտասանած Հնդկաստանի միսիստեր խօսքերը թէ
այս միջոցը ինչպէս երեւում է հրաշքներ է անում, երբ
սրսկումը կատարուում է հիւանդութեան առաջին կամ
երկրորդ օրերը, իսկ աւելի ուշ դրա օգտաւէտութիւնը
աւելի քիչ է:

(Jemaie jud. 24 Մարտի).

ւահանգիստներում՝ Հնդկաստանից եկած նաւերի համար: Ֆլորենցիայում միջազգային Կօնֆերենցիայ էր գումարուած պահպանողական միջոցները մշակելու նպատակով: Բացի այդ ընդհանուր համաեւրոպական ձեռնարկութիւնները, որոնց նպատակն է փակել ժանտախտի ճանապարհները գէպի Եւրոպական ծովերը, իւրաքանչիւր ծովային տէրութիւն նոյնպէս խիստ օրէնքներ են մշակել եկող նաւերի համար:

Բացի այդ, բոլոր միջազգային սանիտար խորհուրդի մէջ առանձին ուղադրութիւն է դարձուած մահճականների ուխտագնացութեան վրա: Ամէն տարի ահագին քանակութիւնով ուխտաւորներ են գնում Մեքայ՝ որտեղ կարող են զնալ և հիւանդներ ու տարածել ժանտախտը ուխտաւորների մէջ, իսկ սրանք հիւանդութիւնը կը տարափոխեն իրանց հայրենիքը և տեղի կը տան տեղական համա-

I 1893-ին Մեքայ այցելել են մօտ 85,000 մահճական ուխտաւորներ, որոնցից Հնդկի մահճականները միայն 34,000, մնացածները զնացել էին Եգիպտոսից եւ Աւստրալիայից 32000, Տաճկաստանից 13,500, Սուդանից 9,600, Պարսկաստանից 2,600, Ռուսաստանից — 1840 մարդ:

ճարակներին: Դեռ 1894 Պարիզի ժողովը որոշել էր արգելել ուխտագնացութիւնը: Անգլիական կառավարութիւնը այս տարի թոյլ չտուեց Հնդկաստանից ուխտ գնալ, նոյնը արգելել է և Ռուսաց կառավարութիւնը Կովկասաբնակ մահճականներին:

III

ԺԱՆՏԱԽՏԻ ԹՈՅՆԸ ԵՒ ՄԱՐԴԻ ՎԱՐԱ- ԿՈՒԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

ԺԱՆՏԱԽՏԻ ԹՈՅՆԸ.— ԵՐՍՒՆԻ ԳԻՒՏԸ.— ԺԱՆՏԱԽՏԻ ՇԻՋՈՒԿԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ
ԵՂԱՆԱԿԸ:

Մենք տեսանք, որ ժանտախտը խիստ վարակիչ յատկութիւն ունի, ինչպէս զիՖտերիտը, Քութէշը, բժաւոր տիֆը, վերջապէս խօլերան: Այժմ յայտնի է, որ վարակիչ հիւանդութիւնները առաջացնող թոյնը, Ֆիլէ-նէլ են կամ սաղմեր, այսինքն անսահման մանր

մարմնիկներ, որոնք միայն խոշորացոյցով կարելի է տեսնել: Իւրաքանչիւր վարակիչ հիւանդութեան ոյժը նրա յատուկ միկրոբն է, որը թէ անմիջապէս և թէ իրեղէնների միջոցով անցնում է հիւանդից առողջին, աճում է սրա մարմնի արեան մէջ ու թունաւորում է նրան: Եւ քանի որ ապացոյցուած է, որ ամէն մէկ վարակիչ հիւանդութիւն իր սեփական սաղմն ունի, բնական էր կարծել որ ժանտախտն էլ նոյնպէս իր սաղմը պիտի ունենայ: Եւ ճշմարիտ որ, 1894-ին ջինստոանի համաճարակի միջոցին երկու բժիշկներ միաժամանակ գտան այդ միկրոբը: Այս բժիշկներից մէկը — Կիտազաւոսն ուղարկուած էր Եապոնական կառավարութեան կողմից, իսկ միւսը — Երսէնը — Ֆրանսիական:

Այս գիտնականները գտան ժանտախտի միկրոբը հիւանդների ուռուցքների մէջ և բազմաթիւ հետազոտութիւնների շնորհիւ կարողացան հաստատել, որ այս միկրոբն է հիւանդութեան իսկական պատճառը: Երսէնը կարողացաւ վարակել կենդանիներին, սըրսկելով նրանց մարմնի մէջ այս միկրոբների մի քանակութիւնը:

Ժանտախտի միկրոբը արագ աճում է զանազան նիւթերի մէջ, նոյնը գուցէ և աւելի մեծ արագութիւնով զարգանում է կենդանիների ու մարդի մարմնի մէջ: Բացի մարդից, նա հարուածում է մի քանի կենդանիների: Ջարմանալի մի երեւոյթ է, որ ժանտախտի համաճարակների սկզբին թէ դաշտային և թէ տնային մկները սարսափելի կերպով ջարդուում են ջինստոանում ու չնդկաստանում: այդ գիտէ ժողովուրդը և նրանց համար նախազգուշութիւն է թէ ժանտախտը մօտ է: Հիւանդ մկները դուրս են թափում իրանց բներից, տատանուելով պտոյտներ են անում, արիւն են թքում և սառկում: Սատկածների բերաններում երբեմն գտնում են փալասի, շորի կտորներ: Միկրոբը տարածուում է նաև ճանճերի միջոցով, որոնք մկների նման մեծ քանակութիւնով սատակում են և որոնց աղիքների մէջ Երսէնը գտել է ժանտախտի միկրոբը: Ժանտախտը հարուածում է նոյնպէս խոզերին, գոմէշներին, նապաստակներին և (կալմետի ասելով) թռչուններին. իսկ մնացած տնային կենդանիների մասին մենք հաստատ տե-


ղեկութիւններ չունինք: Սակայն Կէնտլին պըն-
դումէ, որ բոլորներ կենդանիները (կովե-
րը, եղները, ոչխարները, ձիերը) չեն հի-
ւանդանում: Հնդկաստանում կարծում են,
որ օձերը վարակուում են մկներին ուտելով,
իսկ չախկանները՝ օձերին: Կէնտլիի ասելով
շներն էլ են հիւանդանում գիականեր ուտելով,
այն ինչ արջերը, մի քանիսն երի կարծիքով,
չեն վարակուում: Հանկինը մեծ քանակու-
թիւնով միկրօբներ է գտել նաև մրջին-
ների վրայ, ուրեմն սրանք էլ կարող են տա-
րածել հիւանդութիւնը:

Ժանտախտի միկրօբը մի քանի յատկու-
թիւններ ունի, որոնց ճանաչելը վերին աս-
տիճանի կարևոր է, որովհետև նրանց վրայ
հիմնուում են առողջապահական պահանջ-
ները:

Միկրօբը իւր աճման համար պահան-
ջում է խոնաւ միջավայր, խոնաւ օդ ու
խոնաւ հող: Նա կորցնում է իւր վարակիչ
զօրութիւնը, երբ տաքացնում են նրան
մինչև 60°: Նկատուած է նոյնպէս որ ա-
մառը, շոք ու չոր եղանակներին ժանտախ-
տը երբեմն դադարում է: Մինչև այժմ չի

յաջողուել գտնել այս միկրօբը ջրի մէջ, այն-
պէս որ մենք չգիտենք թէ նա զարգանում
է արգեօք ջրի մէջ, թէ ոչ: Նշանաւոր է
այն հանգամանքը, որ նա գտնուում է հողի
մէջ 2 վերշուկ խորութեամբ:

Միկրօբի գիւտը ունեցաւ իւր գործ-
նական մեծ նշանակութիւնը: Երսէնը իբրև
Պատեօրի աշակերտ հետեւելով նրա մեթո-
դին, ձեռնարկեց *Ժանտախտի Բժշկութեան* — լե-
զուով, որի մասին մենք մանրամասն կըխօ-
սենք յետոյ:



IV

ԺԱՆՏԱԽՏՈՎ ՎԱՐԱԿՈՒԻԼԸ

ՀԻԻԱՆԴԻ ԻՐԵՂԵՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՁ ԶՕՐՈՒԹԻԻ-
ՆԸ.—ՕՐԻՆԱԿՆԵՐ.—ԹՈՅՆԱՏԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ-
ԻՆՁ ՃԱՆԱԳԱՐՀՆԵՐՈՎ Է ՄՏՆՈՒՄ ՄԵՐ ՄԱՐՄ-
ՆԻ ՄԷՁ ԺԱՆՏԱԽՏԻ ԹՈՅՆԸ:

Հիմի տեսնենք, թէ ինչ ճանապարհներով
է մտնում մեր մարմնի մէջ ժանտախտի
թոյնը: Մենք ասեցինք, որ ժանտախտը տե-
ղափոխուում է երկրից երկիր, մարդկանց
ու իրեղէնների միջոցով: Վարակիչ է ոչ
միայն հիւանդը, վարակիչ է (գուցէ աւելի ևս)
նրա գոյքը, նրա հագուստը, իրերը, նոյն իսկ
զուքսը: Բոլոր հեղինակները մատնանիչ են ա-
նում այս վերին աստիճանի կարևոր հանգա-
մանքի վրայ: Հիւանդի իրերը մինչև անգամ ա-
ւելի երկիւղալի են համարուում քան նոյն իսկ
հիւանդը, որովհետև միկրոբը ազատ աճում
է այդ իրերի մէջ, պահպանուում է չափա-

զանց երկար ժամանակ և կարող է վարա-
կել անզգոյշ գործածողին: Շատ անգամ
հիւանդութիւնը վարակուած իրեղէնների
կամ ապրանքների միջոցով տարափոխուել է
շատ հեռու տեղեր: Մի քանի օրինակներ
բաւական են:

ՏՈՒԼՈՆՈՒՄ մի ամբողջ ընտանիք կո-
տորուում է, որովհետև մի բան էր վերցրել
մի հիւանդի մօտից: Օգեստայի համաճարակի
միջոցին մի մարդ ընծայ է ստանում մե-
ռածի թաշկինակը ու տալիս է մի աղջկայ,
որը կապում է իր գլուխը ու վարակուում:
Նոյն համաճարակի միջոցին ապացուցուած են
մի քանի նոյնանման դէպքեր: Մի ոմն Պո-
լեակով հիւանդանում է, հագնելով իր հի-
ւանդ կնոջ գուլպան: Լեբեգիեւը վարակուել
էր մի շինելի միջոցով: Մի մարդ հանում է
իր հիւանդ կնոջ վրայից նրա ականջի օղերը,
վզնոցը, մատանիները և ուրիշ իրեր ու այդ-
քովորը փակում է մի արկղի մէջ և թաղ-
ցնում է նոյն սենեակում վառարանի վերև:
Տասն չորս օրից յետոյ բանում է այդ իրերը
և վարակուում: Գրաստին պատմում է, որ Ֆը-
րանսիայի մի մենաստանում, որտեղ ստացուել

էր մի արկղ ժանտախտոտ իրեղէններով
համարեա բոլորը վարակուեցին ու մեռան:

Մի յայտնի հեղինակ պատմում է մի զար-
մանալի դէպք: Մի արկղի մէջ քսան տարի
շարունակ պահուած էին եղել այն պարտն-
ները, որոնցով փոսն էին իջեցրած եղել ժան-
տախտից մեռածներին, այս արկղը բացող
ծառան վարակուում է ժանտախտով, մեռ-
նում է և օկիզքն է դառնում մի համաճա-
րակի, որից կոտորուում է 10000 մարդ:!

Ընդունուած մի իրողութիւն է, որ ժան-
տախտի թոյնը տեղափոխուում է ապրանքնե-
րի միջոցով: Հիրշը կարծում է, որ Վետլեանկա-
յի ժանտախտի պատճառն այն է եղել, որ կո-
զակները աւտար էին տարել Միջագետից Հա-
յաստան բերած ապրանքները: Հնգկաստանի
ժանտախտը, որի կենտրոնը Կումասօն և
Գուրլալնահանգներն են, միշտ յայտնուում է
չիպասների մէջ: Զիպասները հակեր կա-
պող ու բացողներն են և քանի որ ապրանքը
կարող է գալ վարակուած տեղերից, նրանք
իրանք հիւանդանում են և հիւանդացնում
են ուրիշներին:

Նօշայի համաճարակի ժամանակ (1815-

1816թ.) Խտալական կառավարութիւնը յայ-
տարարել էր հետևեալ նիւթերի ցուցակը
իբրև այնպիսիների, որոց մէջ ժանտախտի
թոյնը կարող է պահուել երկար ժամանակ
և որոնց ներմուծումն վարակուած տեղերից
առողջ երկիրները պէտք է արգելուի:

Սրանք են.

Ուլիարի բուրդը, բամբակ, ձիու մազ,
կանափի թել, մետաքս, մորթիներ և կաշի-
ների, ամէն տեսակի բրդէ, մետաքսէ և քա-
թանէ ապրանքների փետուրների, սպունգ,
թուղթ, կարտոն, գիրք, մագաղաթ, չըձու-
թած պարանների, տէր-ողորմեա, մանր եր-
կաթէ և ժեշտէ իրեր, եթէ նրանք ժան-
գոտած են, հին շորեր, մետաղ ու փող, ճը-
րագու, ճրագուի մոմ և մեղրամոմ, թարմ
ու չորացրած ծաղիկների, մի քանի տեսակ
թարմ միրք, ամէն տեսակ չորացրած մրբեր:
Հացահատիկները երկիւղալի չեն, միայն նը-
րանք չպէտք է խառն լինեն ժանտախտի թոյն
ընդունող նիւթերի հետ:

Այսպէս ուրեմն հիւանդը, հիւանդին
պատկանող իրերը, վարակուած երկրներից
եկած ապրանքներն են հիւանդութիւնը տա-

րածում: Մենք գիտենք այժմ, որ վարակումն կարող է տեղի ունենալ միայն այն պայմանով, եթե ժանտախտի թոյնը, այսինքն միկրոբը, որը պահուած է և աճած յիշած իրեղէնների մէջ, մտնի մեր մարմինը: Այլապէս մարդ չի կարող վարակուել: Եթէ մենք ծածկենք մեր մարմինը այնպէս, որ միկրոբը ոչ մի ճանապարհ չգտնի մտնելու մեր կազմուածքի մէջ, հասկանալի է, որ մենք չենք հիւանդանայ:

Այս գիտելիքը կազմում է ինքնապաշտպանութեան հիմնաքարը:

Տեսնենք ուրեմն, թէ ինչ ճանապարհներով է մտնում թոյնը (միկրոբը) մեր մարմնի մէջ:

Ժանտախտի թոյնը կարող է մտնել մեր մարմնի մէջ երեք ճանապարհով.— կաշու, ճարտարական գործարանի և լսիքի միջոցով:

1) Կաշու միջով միկրոբը կարող է մտնել, եթէ նրա վրայ մի որևէ քերծուած կայ: Այս մի վերին աստիճանի կարևոր գիտելիք է, որի վրա մատնանիշ են անում բոլոր գիտողները: Յայտնի է, որ ոտաբոբիկ մանգալը շատ երկիւղալի է. ոտերի կաշին կա-

րող է քերծուիլ և դուռ բանալ միկրոբի համար: Թոյնը մտնելով այս դռնով կաշու մէջ, արագ աճելով բարձրանում է վեր ու ուռցնում է աճուկների գեղձերը և գոյացնում է ժանտախտի յատուկ ուռուցքները, որոնք յայտնի են Բ-էֆն անունով: Ոտերից վարակուողների աճուկներն է ուռչում, իսկ ձեռներից վարակուողներինը — թւատակերը:

Մի ուրիշ տեսակ վարակումն կաշու միջով: Ճանճերը, լուերը և զանազան միջատները կարող են խայթելով մեզ նոյնպէս թոյն մտցնել մեր արեան մէջ:

2) Ժանտախտի թոյնը մենք կարող ենք ընդունել և ամէն տեսակ ուտելիքի հետ, եթէ նա վարակուած տեղ է եղել: Ասենք իսկոյն, որ եփ տուած ջրի ու եփած կերակուրի մէջ թոյնը ոչնչանում է: Ուրեմն երկիւղալի են միայն հում ուտելիքները: Հեղինակները առանձնապէս շեշտում են մրքերի վրա: Մենք վերև ասեցինք, որ միկրոբը չի գրտնուած ջրի մէջ, հետեւաբար ջուրը երկիւղալի չպէտք է համարել: Ընդհակառակը համաճարակների միջոցին ջուրը ընդունուել է իբրև ախտահանիչ (թոյնը ոչնչացնող) միջոց:

Բազմաթիւ հետազօտութիւններ ապացուցեցին մարսողական գործարանի միջոցով վարակուելու հնարաւորութիւնը: Կենդանիները հիւանդանում են, երբ նրանց կերակուրի մէջ թոյն են խառնում, կամ նրանց ուտեցնում են ժանտախտոտ կենդանու փայծաղը կամ լեարգը (երասէն): Բացի այդ, բժիշկները գտել են ժանտախտի միկրոբը նոյնպէս հիւանդների արտաթորութիւններէ ու թուրքի մէջ:


3) Թուրքերի միջոցով վարակուելու մասին հաստատ հուցմունքներ չունենք, բայց չի կարելի մերժել որ ժանտախտի թոյնը կարող է փոշու հետ օդը ¹ բարձրանալ և մտնել մեր թուրքերը, որտեղ նա կարող է զարգանալ և հիւանդացնել մեզ: Այս նամանակահատուկ հաւանական է, որ Հնդկաստանի այժմեան համաճարակի միջոցին, ինչպէս հաղորդում են, ժանտախտը յաճախ կենտրոնանում է թուրքերի մէջ, առաջացնելով մի

¹ Գերմանացի գիտնական Կօլլէ նշանաւոր գիտնէր է համարում Երասէնի այն գիտողութիւնը, որ ժանտախտի միկրոբը գտնուել է հիւանդների տան աղբի ու կեղտոտութիւնների մէջ:

տեսակ թուրքերի սրնթաց և մահացու բորբոքումն:

Ինչ որ էլ լինին այդ ճանապարհները, միկրոբը մտնելով մեր մարմնի մէջ, սարսափելի արագութիւնով աճում է և թունաւորում ամբողջ կազմուածքը:

Այս թունաւորման արտայայտութիւնները չափազանց բազմաոտեսակ և բարդ են:



Վ

ԺԱՆՏԱԽՏԻ ՆՇԱՆՆԵՐԸ.

ԺԱՆՏԱԽՏԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ. - ԳԵՂՋԵՐԻ ԲՈՐԲՈՒԹՈՒՄՆ (ԲՈՒԲՕՆ). — ԿԱՐԲՈՒՆԿՈՒԼ ԵՒ ԲԾԵՐ. — ԺԱՆՏԱԽՏԻ ԹԵԹԵՒ ԵՒ ԿԱՅԾԱԿԱՀԱՐ. ԴԷՊԻՔԵՐԸ:

Ժանտախտը երբեմն այնպէս թեթեւ է անցնում, որ հիւանդները ոտի վրա են անց կացնում իրանց հիւանդութիւնը: Այս բանը յայտնի է վաղուց արդէն և լաւ նկարագրուած է թէ Հնդկաստանի և թէ Ռուս բժիշկներից: Գրիգորի ասելով, այս

Հիւանդները մինչև անգամ տաքութիւն էլ չունին: Մարտէյի համաճարակի միջոցին (1720-ին) բժիշկները յաճախ գիտել են այնպիսի հիւանդների, որոնք «առանց անհանգստութիւն անգամ զգալու կրում էին գեղձանիկների ուռուցքներ, նրանք ազատ շրջում էին քաղաքի մէջ և իրենց ձեռով խնամում էին իրենց ժանտախտային խոցերը»: Այս համաճարակի միջոցին «շրջող» հիւանդների թիւը հաշուել են 20000: Այս հիւանդները շատ երկիւղալի են, որովհետև կարող են անարգել տարածել հիւանդութիւնը: Այսպէս երբեմն ժանտախտը այնպիսի կերպարանք է ստանում, որ շատ դժուար և մինչև անգամ անկարելի է լինում որոշել: Այս է պատճառը, որ համաճարակի ժամանակ վերին աստիճանի զգոյշ պիտի լինել և չարհամարհել ոչ մի թեթև հիւանդութիւն:

Ամէն հիւանդութիւններից աւելի ժանտախտին նմանում է տիֆը, մանաւանդ բժաւոր տիֆը: Նոյն դողը, նոյն տաքութիւնը, նոյն ընդհանուր թուլութիւնը և ուժասպառումն, նոյն բծերը մարմնի վրայ: Նմանութիւնն այնքան մեծ է, որ շատ համաճարակ-

ների սկզբին բժիշկներն անգամ ժանտախտը տիֆի տեղ են ընդունում: Այս շփոթութիւնը նամանաւանդ կարելի է յաճախ բժաւոր տիֆը կարապետում է ժանտախտին:

Ժանտախտի բնորոշ արտայայտութիւնները պէտք է համարել աւշագեղձերի (Лимфатич. железы) ուռչումն ու բորբոքումն: Բորբոքում են գլխաւորապէս աճուկի, թեւի տակի, ծնօտների տակի և պարանոցի գեղձերը, որոնք մեծանում ցաւում են, կազմում են բուբօններ, յետոյ թարախակալում են, և բլլում, եթէ հիւանդութիւնը տևում է մի քանի ժամանակ: Ամենից յաճախ մեծանում են աճուկի և թեւի գեղձերը: Պարանոցի բուբօնները համարուում են վերին աստիճանի չարագուշակ, հիւանդը մահացու վտանգի մէջ է: Առհասարակ հիւանդը աւելի վաղ է մեռնում, քան թէ այդ խուլերը ժամանակ են ունենում թարախակալելու և բացուելու: Երբ հիւանդութիւնը սրն թաց է, խուլերը ժամանակ չեն ունենում գոյանալու:

Ինչպէս մենք տեսանք արդէն, այս բուբօնները գոյանում են ժանտախտի թոյնից, որը մտնում է մեր մարմինը կաշու քեր-

ծուածով կամ միջատի կծածով: Գերեզման փորողները բոքիկ ոտերով հիւանդանում էին այսպէս. առաջ ծնկները սաստիկ ցաւում էին, յետոյ աճուկների խուլերը ուռչում էին և հիւանդները մեռնում: Չուտիրկինը պատմում է, որ մէկը մի ժանտախտոտ հիւանդից վերցնում է մի դրամ և դնում է բերանը, երեկոյեան ծնօտների գեղծերը ուռչում են, իսկ միւս օրը նա մեռնում է: Բացի այս խուլերը, ժանտախտի միջոցին մարմնի վրայ երեւում են մեծ խոցեր, որոնք սկզբում նման են լուի կծածին, բայց շուտով մեծանում են և ծածկուում են բշտիկներով, կարծես այրուած լինեն: Յետոյ կաշին հաստանում է, ուռչում է, բշտիկները սւանում են, չորանում և ընկնում թողնելով վէրքեր: Յաճախ փտումն լայնանում է ու մեծ բծեր է գառնում: Այս խուլերը (անթրաքս կարբունկով) կարող են գուրս գալ մարմնի բոլոր մասերի վրայ, բացի գլուխը:

Կարբունկուլի ծագումն բացատրուում է նոյն ձևով, ինչպէս բուբոններին, այսինքն, նրանք էլ հետեւանք են ժանտախտի թոյնի անմիջական ներգործութեան կաշու վրայ:

Բծերի երեւալը կաշու վրայ մի չարագուշակ երեւոյթ է: Օրերի ասելով, «բծերը մահուան համարեա հաստատ նշաններ են: Երբ նրանք երեւում են, այլ ևս քիչ բան կայ անելու, թէև պատահում է, որ առողջանում են էլ: Այս բծերը սաստիկ նմանեցնում են ժանտախտը բժաւոր տիֆին և, ճշմարիտ որ, ինչպէս մենք ասել ենք, այս երկու հիւանդութիւնները խառնուում են: Այս բծերի հետ միաժամանակ յայտնուում են արիւնհոսութիւններ քթից, թոքերից, ստամոքսից, աղիքներից: Չուտիրկինը տեսել է, որ այս բծերը երեւացել են մահից յետոյ ևս: Ժանտախտի թոյնը իսկոյն չի առաջացնում:

Ժանտախտի հիւանդութիւնն սկսուում է նախագնաց երեւոյթներով, որոնք նկատուում են ամէն ծանր հիւանդութեան սկզբին և յատուկ են բոլոր ջերմային հիւանդութիւններին: Այս ընդհանուր թուլութիւն է՝ ախորժակի բացակայութիւնը, յոգնածութիւնը, տրամադրութեան վատութիւնը: Հիւանդի գլուխը ցաւում է, պտոյտ է գալիս, մարմինը ջարդուում է ու սրսփում: Յետոյ երեւում են ժանտախտի նշանները:

Ժանտը, նայելով իր ոյժին, կարող է մի քանի տեսակ լինել. ամենաթույլից մինչև ամենասաստիկը:

Այսած ամենաթույլ ձևից, որը մենք նկարագրեցինք և որը առանց ջերմի է անցնում, մինչև «կայծակաճար Գէպէլը», որոնք սպանում են հիւանդին 3-4 ժամում, կան մի քանի աստիճաններ: Երբ միկրոբների աճումն հասնում է որոշեալ աստիճանի, արիւնը թունաւորութեամբ է և այն ժամանակ նկատուում են ժանտախտի իսկական նշանները:

Եթէ թունաւորութեամբ է և հիւանդի կազմուածքը բաւական առողջ է, որ կարողանայ դիմագրել հիւանդութեանը, այն ժամանակ տաքութիւնը 38-39⁰-ից չի անցնում: Աճուկի ու թեւատակերի գեղձերը ցաւում են, ուռչում, հիւանդը տանջուում է սաստիկ գլխացաւից: Նրա ամբողջ մարմինը ջարդուում է, ախորժակը կորչում է, լեզուն վատ է, սրտի զարկը արագանում է և թուլանում: Եթէ հիւանդը առողջանալու է, վրան քրտինք է գալիս, ցաւերը զաղարում են, երբեմն

բուբոնները թարախակալում են և բացվում: Բայց տարաբախտաբար հիւանդութիւնը աւելի ահռելի կերպարանք է ստանում:

Սաստիկ դողից յետոյ, տաքութիւնը հասնում է 40⁰-41⁰ ի, հիւանդը արագ ուժասպառ է լինում, երբեմն ուշը կորցնում է և ընկնում է ծանր տիֆային դրութեան մէջ: Միւսնոյն միջոցին գեղձերը ուռչում են, ցաւում, մարմնի վրայ երեւում են արգէն նկարագրած խոցերը, երբեմն տեղի են ունենում արիւնհոսութիւններ, խեղճին տանջում է անյագ ծարաւը, անտանելի գլխացաւը, լեզուն չորացած, մարմինը թուլացած, նա ընկնում է զառանցման մէջ, կոշմարները խլւում են նրա քունը, կաշու վրայ երեւում են մուգ կարմիր, կապտագոյն կամ սև բծեր: վերջապէս սիրտը կորցնում է իր ոյժը, արիւնը վիժում է բերնից ու աղիքներից, մրկանները ձգձգուում են, կարկամում, շնչառութիւնը ծանրանում է և հիւանդը մեռնում է սարսափելի տանջանքների կամ անըզգայութեան մէջ:

Այս է ժանտախտի ընդհանուր տեսքը, որը սարսափ է ազդում դիտողի վրայ:

ինչպէս տեսնում ենք ոչ մի նշան չկայ, որով կարելի լինէր հաստատապէս ասել, որ հիւանդութիւնը ժանտախտ է: Տիֆից նրան զանազանելու համար անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ համաճարակի գոյութիւնը հաւան երկրներում, հիւանդութեան սրընթաց յատկութիւնը, գեղձերի արագ ու յաճախ ուռչումն ու ցաւելը և այլն: Ինչեւիցէ համաճարակի միջոցին ամէն հիւանդութիւն, որքան էլ թեթեւ լինի նա, պիտի միշտ մտածել տայ մեզ ժանտախտի մասին:



VI

ԺԱՆՏԱԽՏԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

ԺԱՆՏԱԽՏԸ ԱՆԲՈՒԺԵԼԻ ԶԷ.— ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԲ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.— ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՇԻՋՈՒԿՈՎ.— ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ.— ՆԱԽԱՋԳՈՒՇԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄՆ:

Հատերին գուցէ զարմանալի թուի, որ մենք խօսում ենք ժանտախտի բժշկութեան մասին: Եւ այդ հասկանալի է: Այն սոսկալի կոտորածները, որոնք արեւէ ամէն դարերում ժանտախտը, նա միշտ համարուել է և այժմ էլ համարուում է բոլորովին անբուժելի: Բարեբախտաբար այս կարծիքը միանգամայն անհիմն է և այսօր մենք իրաւունք ունենք համոզուած ասելու, որ ժանտախտը բուժելի է գուցէ նոյն չափով, ինչ չափով որ բուժելի են միւս ծանր հիւանդութիւնները, ինչպէս օր. խօլերան, դեղին ջերմը, նոյն իսկ

գիֆտերիտը: Գոնէ այս է այն բժիշկները
կարծիքը, որոնք գործնականապէս մօտ ծա-
նօթ են եղել ժանտախտի հետ: Բժ. Բէկը
և բժ. Զէմս Կէնտլին յաճախ բժշկել են ժան-
տախտը հասարակ միջոցներով: «Միջին ծան-
րութեան ժանտախտը, ի հարկէ կարելի է
բժշկել: Անյաջողութիւնները կարելի է վե-
րագրել աւելի իրանց հիւանդների անզգոյշ
վերաբերումն դէպի իրանց հիւանդութիւնը»
քան թէ բժշկութեան գօտարութեանը»
ասում է բժ. Պանչենկոն:

Այս հիւանդութեան ընթացքը կախուած
է լաւ խնամքից: Յայտնի է, որ Եւրոպացիներ-
րից շատ նշանաւոր տոկոս առողջանում են
շնորհիւ լաւ առողջապահական պայմաննե-
րի և լաւ բժշկական խնամքի, այն ինչ չըն-
դիկները և Զինացիք մեծ մասամբ մեռ-
նում են: ¹

I Կէնտլին նկատել է, որ տեղացի հիւանդներից ա-
ւելի մեծ տոկոս են մեռնում, քան Եւրոպացի հիւանդնե-
րից: Հօնկոնգոում 1894-ին բնիկ հիւանդներից մեռան 95%¹,
իսի հիւանդ Եւրոպացիներից միայն 18%², այս տարբե-
րութիւնը մեռնողների տոկոսների մէջ Կէնտլին վերագրում
է հետեւեալ ֆակտորին: 1) Տեղացիք տու հառարակ սակաւ են

Աւելորդ է մանրամասն խօսել այստեղ
բժշկութեան մասին: Մենք պնդում ենք, որ
ամէն դէպքում պէտք է անմիջապէս դիմել
բժշկի: Սակայն մինչև բժշկի գալը կամ հի-
ւանդանոց տանելը, կարելի է գործ դնել մի
քանի միջոցներ:

Հիւանդի համար պէտք է ընտրել տան
միջի ամենալաւ սենեակը, որի օդը միշտ
պէտք է նորոգել:

Եթէ տաքութիւնը սաստիկ է և հիւան-
դը շատ անհանգիստ է, պէտք է ամբողջ
մարմինը քացախով ջուր քսել օրական մի
քանի անգամ, և փաթաթել բրդէ վերմակի
կամ շալի մէջ մինչև լաւ չորանայ: Կամ
ուղղակի փաթաթել թաց քաթանի մէջ: Սաս-
տիկ գլխացաւի դէմ գլխին դնում են մի պարկ
մանրած սառուցով լի, կամ սառը փաթեթ-

դիմում բժիշկներին (մանաւանդ Եւրոպացի բժիշկներին),
եւ եթէ դիմեն էլ, պըռնում են, երբ արդէն ուշ է լի-
նում: 2) Տեղացիների թաղերը չափազանց հեռու են Եւ-
րոպական թաղերից: 3) Բնիկները մերժում են ընդունել
ոգէլից խմիչքներ, որոնք շատ օգուտ են հիւանդին իբրեւ
դեղ: 4) Նրանք համոզուած են, որ բոլոր բժշկութիւնը
պիտի կայանայ մարմնի տաքութիւնը իջեցնելու մէջ:

ներ (սառը ջրի մէջ թացացրած քաթան) շուտ շուտ փոխելով: Սառուցը գլխի վրա պէտք է պահել նոյնպէս և այն ժամանակ, երբ հիւանդը զառանցման կամ անզգայական դրութեան մէջ է: Աճուկների թեւատակերի, վզի ուռուցքների (կամ եթէ դեռ ուռուցք չկայ, այլ ցաւ կայ) դնել կտաւատէ տաք խաշիւներ: Կապութեան դէմ կարելի է տալ լուծողական: Եթէ սիրտը այրվում է սառուց կուլ տալու համար, սառուց ուտեցնել, իսկ փոխելու դէմ մանանեխի սպեղանի (ГОРЧУЧНИКЪ) դնել սրտի գգալի, փորի վրա: Ուշագնացութեան միջոցին շփել մարմինը արաղով, սպիրտով, հոտ տալ քթին նաշատի-րի սպիրտով (НАПАТЫРЪ): Հիւանդին պէտք է դիւրամարս բաներ ուտեցնել, թթուաշխմիջը-ներ տալ (լիմոնադ, լիմոնով թէյ, թթու մու-րաբայ ջրով և այլն), իսկ ուժերը պահպանե-լու համար տալ քիչ քիչ կոնիակ, լաւ գինի կամ օղի և այս բոլորը ի հարկէ ջրով: Պէտք է զգուշանալ զանազան պարսկական միջոց-ներից:

Բայց այսօր ամբողջ աշխարհի յոյսը պա-րսկական բժշկութեան վրայ է, որի մասին թող

թող տրուի մեզ մի քիչ երկար կանգ առնել:

Այս բժշկութիւնը կատարուում է այս-պէս անուանուած հակաժանտախտային շի-ջուկով:

Այս շիջուկը պատրաստուում է հա-մարեա նոյն կերպով, ինչ կերպով որ պատ-րաստուում է Դիֆթերիտի շիջուկը: Սկզբուն-քըն էլ, սիստեմն էլ նոյն են:

Ձիու արեան մէջ սրսկում են ժանտախ-տի միկրոբը որոշեալ քանակութեամբ: Ձին ստանալով այս թոյնը, ի հարկէ թունաւոր-ւում է, նրա տաքութիւնը հասնում է 41⁰, 5, որը տեւում է մի քանի օր: Երբ ջերմը իջնում է, նրան նորից սրսկում են և այս-պէս կրկնում են սրսկումները մի քանի ան-գամ: Մի քանի սրսկումներից յետոյ ձին արդէն ընտելանում է թոյնին, որը նրա վրա այլևս չի ազդում: Այն ժամանակ նրա երակ-ներից դուրս են թողնում որոշեալ քանա-կութեամբ արիւն, որից և պատրաստում են շիջուկ, այսինքն, արեան հեղուկը: Այս շիջուկն այն յատկութիւնն ունի, որ երբ նրան սրս-կում են արդէն ժանտախտով հիւանդացած կենդանիների կաշու տակ, նրանք առողջա-

նում են: Առաջին ձին, որից հանում էին շիջուկը, պատրաստուեց Պարիզում, Պաստեօրի ինստիտուտում:

Երսէնը այս ձիու շիջուկից տարաւ իր հետ Զինաստան, Կանտոն քաղաքը, որտեղ ժանտախտ կար, իր հեղուկը մարդկանց վրայ ևս փորձելու համար, բայց նա այստեղ մեծ ընդդիմութիւն գտաւ չինաստանցիների կողմից, շնորհիւ նրանց թշնամական վերաբերմանը դէպի Եւրոպացիները, և մասնաւորապէս դէպի Եւրոպացի բնակիչները: Բարեբախտաբար մի դէպք միջոց առեց Զրանսիական բժշկին համոզուելու, որ իր դեղը մարդի վրա էլ նոյնպէս փրկարար ազդեցութիւն կարող է ունենալ: Մէկ օր Կանտոնի կաթոլիկ միսսիայի եպիսկոպոս Շոսսին այցելութեան միջոցին այս վերջինս հարցնում է երսէնին, թէ արդեօք նա չգիտէ՞ մի նոր միջոց ժանտախտի աւելացնելու, որ միսսիային պատկանող մի չինացի պատանի հիւանդացել է:

— Ես մի դեղ ունեմ, պատասխանում է բժիշկը, որ ես լաւ դեղ եմ համարում, բայց որը դեռ չեմ գործադրել հիւանդի վրա:

Հայր Շոսսը, որը այս պատանուն կորած էր համարում, տանում է երսէնին նրա մօտ և ինդրում է գործ դնել նոր հեղուկը, ասելով, որ իր վրայ է առնում բոլոր պատասխանատուութիւնը: Երսէնը սրսկում է իր շիջուկը այդ հիւանդին մի քանի անգամ և միւս օրը նա առողջանում է: Երկու օրից յետոյ բժիշկը ստիպուած է լինում մեկնել Կանտոնից, թողնելով Շոսսին իր հեղուկից: Նրա գնալուց յետոյ Շոսսը երկու հիւանդի էլ արսկում է և երկուսն էլ առողջանում են: Երսէնը Յուլիսի 1-ին գնում է Ամոյ, որտեղ ժանտախտը դեռ կոտորած էր անում: Ամոյը ունի 200—300 հազար բնակիչ: Այս նաւահանգիստը այցելում են ամէն կողմերից եկող նաւեր, որոնք և բերել էին հիւանդութիւնը: Ամոյի բնակիչները աւելի քիչ են խորշում Եւրոպացիներից և այդ է պատճառը, որ երսէնին յաջողուեց 10 օրուայ ընթացքում իր հեղուկը գործադրել 23 հիւանդի վրայ: Այս թուից միայն երկուսը մեռան, այն էլ երեւի ուշ գիմելու պատճառով: ¹ Այս

Հաղորդում են, որ ուսու բժիշկը Խաւկին (Хавкин) որը արդէն մի քանի տարի է, ինչ Հնդկաստանում 100000-ից

չլսուած յաջողութիւնը հռչակել է Երսէնի անունը Զինատանում և Հնդկաստանում:

«Որքան վաղ գործ գրուի սրսկումն, այնքան շուտ կառողջանայ հիւանդը: Մարդ ուղղակի ապշում է, տեսնելով, թէ ինչպէս մի քանի ժամուայ մէջ բոլոր ահաբեկ երեւոյթները անյետանում են, երբ շիջուկը սրսկել են հիւանդութեան առաջին կամ երկրորդ օրերը, բուբոնները աչքի առաջ հայլում են: Եթէ սրսկումն ուշացել է, անհրաժեշտ է աւելի մեծ քանակութիւն գործ դնել: Բացի այդ, դիտումները ցոյց են տուել, որ սրսկումից յետոյ հիւանդը աւելի շատ է կազդուրւում, քան այն դէպքում, երբ առողջանում են առանց սրսկումի: Շիջուկը անզօր է այն դէպքերում, երբ սրտի բաբախումն ու շնչառութիւնը անկանոն են, սիրտը թուլացել է և թունաւորումն մեծ է:

Պատճառներ: Բայց հակաժանտախտային շիջուկը գործ է դրուում ոչ միայն իբրեւ

աւելի հակախոլերային սրսկումներ է արել, հիմի նոյնպէս դառնալով է ժանտախտի բժշկութիւնով եւ արդէն աւելի քան 2000 մարդի սրսկել է Երսէնի շիջուկը, եւ սըրանցից միմիայն երկուսն են մեռել, ինչպէս հաղորդում են լրագիրները:

նախազգուշական միջոց, առողջներին վարակումից ազատ պահելու համար, ինչպէս այդ արվում է ծաղիկ հիւանդութեան դէմ: Այս ժանտախտի պատուաստումն է, որը հիմնաւոր է նոյն սկզբունքի վրա, ինչ որ ծաղիկին, կենդանիների վրա արած փորձերը ապացուցեցին որ այդ կարելի է և ուրեմն եթէ մի տան մէջ ժանտախտով հիւանդ կայ, ընտանիքի միւս անդամներին կարելի է փրկել պատուաստելով նրանց ժանտախտը (այսինքն շիջուկ սրսկելով նրանց): Երսէնը կարծում է, որ այս ամենաազդու միջոցն է ժանտախտի տարածման առաջն առնելու: Յաւակցաբար մենք մինչեւ այժմ ճիշտ տեղեկութիւններ չունենք, թէ ինչ ծաւալով և ինչ յաջողութիւնով է կատարուում այս պատուաստումն Հնդկաստանում, գիտենք միայն, որ այժմ Երսէնը հրաւիրուած է Բոմբէյ:

Բժշկութեան այս նոր եղանակը այսօր գրաւել է բոլոր գիտնականների լուրջ ուշադրութիւնը: Եւ այդ հասկանալի է, որովհետեւ այս գիտը դարավերջիս ամենամեծ գիտերից մէկն է, և ամէնքը միաբերտն ողջունում են այս նոր ձեւի բժշկութիւնը: Եւ չը-

նայելով, որ դեռ աւելի մանրամասն տեղեկութիւններ չկան, թէ որքան հետեւեալում արդարացած են Երսէնի յոյսերը, արգէն մեծ գիտական կենտրոններում զբաղուում են այդ հարցով և երեւի շուտով մեծ քաղաքներում և նոյն իսկ Թիֆլիզում ձեռնարկեն շիջուկ պատրաստել: Համարեա ամէն օր լրագիրները մեզ բերում են գիտականների յուսալից կարծիքը այս բժշկութեան մասին, որոնց միջից մենք առաջ կը բերենք միմիայն Պարիզի Պրօֆ. Լանդուզի խօսքերը:

«Ժանտախտի շիջուկով բժշկումը, ասել է նա իր դասախօսութեանց մէջ, այսօր մի վերին աստիճանի կենսական խնդիր է դառել: Քսան դարից ի վեր ժանտախտը մահ է տարածում աշխարհի վրա և մարդկութիւնը անզօր էր նրա դէմ: Պաստեօրի տարին էր հնարաւոր գտնել այս հիւանդութեան իսկական բժշկութիւնը: Լանդուզին համոզուած է, որ եթէ արդարաւան նախազգուշական պատուաստման վրա դրած յոյսերը այն ժամանակ կարելի է ազատել մարդկանց կարանտինի խտութիւններից, և բաւականաւ միայն պատուաստելով նրանց:

— 57 —

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԺԱՆՏԱԽՏԻ ԴԵՄ:

Փոռումն ու կեղտոտութիւնը. — Գանգէսը և Նեղոսը. — ինչպէս պէտք է կազմակերպել մաքրութեան գործը քաղաքներում և գիւղերում. — Ընակարանը քաղաքներում և գիւղերում. — պէտք է զգուշանալ մկներից. — սնունդ. — գաղթականներին օգնելը. — ֆիզիքական ուժասպառութիւնը. — վախը. — հանրամատչելի բրօշիւրներ և դասախօսութիւններ ժանտախտի մասին. — խորհուրդներ, երբ ժանտախտը երևայ. — ախտահանիչ միջոցներ. — դեղեր:

Մեր ծանօթութիւնը ժանտախտի էութեան, նրա յատկութիւնների, նրա աճման նպաստող պայմանների հետ մեզ թելադրում են մի շարք պահպանողական միջոցներ, որոնք մենք պարտաւոր ենք գործադրելու: Այս կանոնները բոլորը հիմնուած են մեր տուած տեղեկութիւնների վրայ: Եթէ մենք գիտենք որ ժանտախտի

Թոյնը լաւ զարգանում է, աճում է կեղտոտ տեղերում, երկար պահպանուում է և զօրանում հիւանդից մնացած իրերի մէջ, բազմանում է փայլ, լուսնային նիւթերի և նոյն իսկ հողի մէջ, եթէ միայն այդ հողը խոնաւ է և ծածկուած նեխող նիւթերով, այն ժամանակ մենք կը հեռացնենք նրա զարգացմանը նպաստող այս պայմանները։ Միւս կողմից, եթէ մենք համոզուած ենք, որ միկրոբը հարուածում է գլխաւորապէս վատ սննդից և առ հասարակ վատ կեանքից թուլացած մարդկանց, մենք կաշխատենք կազդուրել մեզ, որքան հնարաւոր է, դուրս գալ վատ հակառողջական պայմաններից, թեթեւացնել մեր աշխատանքը, որպէս զի չսպառուեն մեր ոյժերը և այլն։

1) Պաշտպանողական միջոցները թուելիս մենք կը դեկլարուենք բացի այն ցուցմունքներով, որոնք թելադրում է մեզ ժանտախտի մասին մեր ունեցած տեղեկութիւնները, նոյնպէս և ընդհանուր առողջապահական կանոններով։ Ժանտախտի հետ կը ռուելու ամենազօրեղ միջոցը հալոն է։ Այս տեսակէտից ժանտախտը ոչնչով չի

տարբերուում միւս վարակիչ հիւանդութիւններից, ինչպէս է խօլերան։

Ժանտախտի ինչպէս և խօլերայի սաղմը իր աճման համար պարարտ հող են գտնում կեղտոտութեան և մասնաւորապէս փայլ կեղտոտութեան մէջ։ Վտոււմն է որ կերակուր է մատակարարում միկրոբներին։

Ինչ է փայլ ?

Փտոււմն կամ նեխումն զանազան օրգանիկ նիւթերի քայքայումն է։ Օրգանիկ մարմինները մարդու ու կենդանիների զիակներըն են, մարդու ու կենդանիների արտաթորութիւններն են, ինչպէս՝ ոսկորները, միսը և այլն։ Փտում են նոյնպէս բոյսերը, մանաւանդ ճահիճները։ Փտումն պահանջում է որոշեալ աստիճանի ջերմութիւն և խոնաւութիւն։

Ժանտախտի համաճարակների պատմութիւնը մի մեծ դատաւիճիւ է կէղտոտութեան, չնդիկների և եգիպտացիների հակառողջական կեանքը յիշատակուում է ամէն տեղ։ Գանգէսն ու Նեղոսը աղտոտութիւնների կըլօակներ են։ Երկրի բոլոր կեղտերը, մարդկանց ու կենդանիների զիակները թափուում են Գանգէսի սրբազան ջրերը և թունաւորում

գետը: Այս գետերը դուրս գալով իրանց բներինց հեղեղում են երկիրը մեծ տարածութեան վրայ: Իսկ երբ ջուրը պակասում է, գետը քաշուում է իր բունը, թողնելով գետնի վրա մի հաստ շերտ տիղմ փտող օրգանիկ նիւթերից բաղկացած, մարդի ու կենդանիների դիակներ և այս բոլորը փտում է ջրմարեւի տակ ու պարարտեցնում է հողը, թէ խօւերայի, թէ ժանտախտի, թէ ուրիշ սոսկալի տարափոխիկ հիւանդութիւնների համար: Սրան աջակցում են ի հարկէ և բնիկ արեւելեան ժողովրդի ծայրահեղ անմաքրութիւնը: Նոյնը պէտք է ասել և իրակ—Արաբի (Միջագետքի) մասին, որտեղ միանում են Տիգրիս և Եփրատը և որտեղ մեր դարում ժանտախտը յաճախ երևացել է:

Այսպէս ուրեմն, մաքրութիւնը պիտի մեր ամենագլխաւոր հոգսը լինի: Ամէնքը այժմ և եթէ չսպասելով ժանտախտի մօտենալուն, պէտք է աշխատեն մաքրել ու շարունակ մաքուր պահել իրանց տունը, իրանց գիւղն ու քաղաքը: Ժողովուրդը պիտի հասկանայ, որ մաքրութեան հիշ է փրկութիւնը: Բաւական չէ, որ ամէն մէկը մաքրի իր տունը, բոլորը

պիտի հասկանան, որ իրանց սեփական օգտի համար, նրանք պէտք է համերաշխ գործեն ընդհանուր մաքրութիւնը պահպանելու համար, այսպիսի ժամանակ ոչ մի զոհաբերութիւն, ոչ մի ծախս չպէտք է խնայել:

Մեծ քաղաքներում, որտեղ կառավարութիւնից հսկողութիւն կայ, մաքրութեան գործը կազմակերպւում են այս մարմինները: Սակայն չպէտք է մոռանալ որ ամէն մի քաղաքացի իր կողմից աջակցի գործին եռանդուն կերպով, գիտակցօրէն վերաբերուելով դէպի այդ գործը, լաւ հասկանալով, որ օգուտը սերտ կերպով կապուած է ընդհանուր շահերի հետ:

Գիւղերում այս հոգսը ամբողջապէս գիւղացիների վրայ է ընկնում: Գիւղի քահանան, ուսուցիչը և բանիմաց մարդիկ պիտի ժողովեն գիւղացիներին և կազմակերպեն մաքրութեան գործը:

Գիւղը պիտի բաժանուի մասերի, որոնք յանձնուելու են բանուոր խմբերի: Այս վերջինները ընտրուում են գիւղացիների միջից որոշեալ ժամանակով, իւրաքանչիւր խումբը կունենայ իր ղեկավարը, որի հսկողութեան

ներքոյնրանք հերթով կը մաքրեն իրանց յան-
ձընուած գիւղամասերը: Եթէ գիւղերում
չեն գտնուի այնպիսի անձինք, որոնք կարող
լինէին ղեկավարել այս գործը, մօտակայ քա-
ղաքի երիտասարդները պիտի կազմեն գա-
ւառական շրջող մասնախմբեր, որոնք կը շրջեն
գիւղերը և կօգնեն կառավարչական պաշտօ-
նեաներին (բացատրելով ժողովրդին մաքրու-
թեան անհրաժեշտութիւնը) ամէն տեղ մաք-
րութեան գործը կազմակերպելու:

Քանի որ ամէն բանից աւելի անմաքուր
են մարդկանց ու կենդանիների արտաթորու-
թիւնները, հետեւեալ խմբերի գլխաւոր
գործը պիտի լինի այս աղտոտութիւնները
քաղաքից և գիւղից հեռացնելը: Գիւղերում
կանոնաւոր արտաքնոցներ չկան և աղտոտու-
թիւնները մնում են բացօդեայ, փտում են ու
կեղտոտում են գետինը: Վասն որոյ պէտք է
այժմ և իսկ մաքրել այս բոլոր կեղտերը,
վերցնել մի շերտ հող կեղտոտուած գետնից
(գոնէ կէս արշին խորութեամբ, քանի որ,
ինչպէս գիտենք, ժանտախտի թոյնը զարգա-
նում է նաև գետնի մէջ), յետոյ անշէջ կիր ցա-
նել և այնուհետև այլ ևս չաղտոտել գետինը:

Արտաքնոցները պէտք է հոր ունենան
և ամէն օր այդհորի մէջպիտի լցնեն կրի ջուր,
որը ոչնչացնում է ժանտախտի սաղմը: Իսկ
նրանց, որոնք չեն կարող այնպիսի արտաք-
նոցներ ունենալ, խորհուրդ կը տանք կամ փո-
քրը փոսեր փորել ու շուտ շուտ կրով ու հո-
ղով ծածկել, կամ առանձին ամաններ (ձու-
թած արկղ, կամ տակառ) ունենալ, որոնք
գիշերները պէտք է ծածկել մի հաստ շերտ
կրով, դուրս տանել և դատարկել առանձին
հորերի մէջ գիւղից կամ քաղաքից դուրս:

Պէտք է հեռացնել նոյնպէս կենդանի-
ների գիւղից և ամէն տեսակ փտող նիւ-
թեր:

Այստեղ մենք հանդիպում ենք մի դժուար
լուծելու խնդրի, այն է ի՞նչպէս պէտք է վա-
րուել կո՛ւի և ա՛խրի հետ, որոնք միակ վառե-
լու նիւթերն են մեր գաւառականշատ քաղաք-
ներում և գուցէ բոլոր գիւղերում: Եթէ
միայն հնարաւորութիւն կայ, պէտք է նրանց
գիւղից և քաղաքից դուրս պահել, իսկ եթէ
այդ անկարելի է որ և է պատճառով, մենք
պէտք է հաշտուենք այս անփախչելի չարի-
քի հետ, միայն պէտք է պահանջել, որ ցա-

նը, աթարը լաւ չորացրած լինին և պահուին ծածկուած տեղերում, որպէս զի անձրևը չթրջի և չյարուցանի նրա մէջ վեր յիշած վնասակար փոռումն:

Տան աղբը նոյնպէս չպէտք է թափել դռան դէմ, այլ հաւաքել մի արկղի մէջ, որը պէտք է դուրս տարուի որքան կարելի է յաճախ:

2. Բնակարան:

Երկրորդ կարևոր խնդիրը առողջապահական տեսակէտից բնակարանի խնդիրն է: Բնակարանը պիտի լինի ոչ խոնաւ, ոչ մութ և ոչ նեղ: Այս հիմունքների վրա ներքնայարկերը, նկուղները պիտի վնասակար համարել: Քաղաքներում պէտք է առանձին տներ վարձուին կամ շինուին (աւելի լաւ է քաղաքից դուրս) և այնտեղ տեղափոխեն ներքնայարկի բնակիչներին:

Յիշած տները կարող են շինուել ամէն տեսակ նիւթերից, — տախտակից, հաստ կոտաից, թաղիւրից և այլն: Շատ յարմար են մանաւանդ տաք եղանակներին, քրդի կարպետի ու քէչայի չագիրները: Անցեալ համաճարակների ժամանակ, այս միջոցը կառավար-

րութիւնը գործ էր ածում՝ նովկասում, բնակիչներին դուրս էին հանում վտանգուած քաղաքամասերից ու քաղաքից դուրս բնակեցնում տալով նրանց նաւ ուտելիք ու վառելիք:

Գիւղերում ու քաղաքներում բազմամարդ ընտանիքներ կան, որոնք ապրում են մի երկու սենեակի կամ նոյն իսկ մի հացատան մէջ: Ժանտախտի մօտենալուն այս ընտանիքները պիտի բաժանուին, որպէս զի նեղօւածք չլինի տանը: Պէտք է լաւ հասկանալ, որ երբ մի սենեակի մէջ շատ հոգի է ապրում, այդ սենեակի օդը (մանաւանդ գիշերը) սաստիկ անմաքուր է դառնում, իսկ յայտնի է, որ անմաքուր օդը վնասակար է ինքն ըստ ինքեան, իսկ համաճարակի միջոցին նրա վնասակարութիւնը հարիւրապատկուում է: Գիւղական գետնափոր տները շատ վատ չեն, եթէ միայն չոր են: Բայց պէտք է խուսափել անասունների հետ մի տան մէջ ապրելուց: Հարկաւոր է դատել նրանց, իսկ եթէ այդ անկտրելի է, պէտք է միշտ ամենախիստ մաքրութիւն պահպանել, յատկաւ միշտ սալելով և չոր ու մաքուր պահելով անասունների ազտոտութիւնները անմիջապէս

հեռացնելով, մէզը չորացնելով, նրանց ոտերի տակ կիր ցանելով, և տան օդը միշտ մաքուր պահելով:

Ինչ որ լինի կացարանը, երբէք չպէտք է մոռանալ, որ ժանտախտի թոյնը զարգանում է փակ օդի մէջ: Ուրեմն անհրաժեշտ է միշտ մաքուր պահել տների օդը, բանալով լուսամուտները, դռները, երթիկները, չվախենալով ցրտից, որովհետեւ ցրտից առաջացած վնասը բոլորովին աննշան է, համեմատելով օդի անմաքութիւնից հառած վնասին:

Հիմնուելով այն իրողութեան վրայ, որ ճանճերը կարող են տեղափոխել ժանտախտի թոյնը, հարկաւոր է նրանց ոչնչացնել տան մէջ. դրա համար շատ միջոցներ կան, որոնք ամէնքին էլ յայտնի են:

Աւելի ևս զգոյշ պէտք է լինել մկներից, որոնք ինչպէս գիտենք մարդկանցից առաջ են հիւանդանում և սատկոտում: Պէտք է հիմի իսկ և եթ ամէն հնար գործ դնել ոչընչացնելու նրանց, բռնելով պատերի ծակերը, դեղեր ցանելով և այլն, և սատկածներին դուրս տանել և հորել: Պատմում են, որ Բոմբէյում, որտեղ մկները ահագին քանա-

կութեամբ կոտորուում էին ժանտախտից և լցրել էին փողոցները, երեխաները խաղում էին նրանց դիակների հետ: Եւ ի հարկէ իրանք էլ վարակուում էին և ցաւը տարածում քաղաքի մէջ:

Այս խրատատու օրինակներն են, որ իրաւունք են տալիս մեզ այդ մասին խօսելու այստեղ:

3 Սնուց:

Ժանտախտը, ինչպէս և բոլոր վարակիչ հիւանդութիւնները աւելի հարուածում են վատ սնունդ ստացողներին, նրանց, որոնք սպառում են իրանց ուժերը ծանր աշխատանքների մէջ և բաւական սնունդ չեն ատանում: Մեծ համաճարակները միշտ տեղի են ունեցել սովին, պատերազմների և ուրիշ ժողովրդական աղէտների ժամանակ: Հնդկաստանում ժանտախտը համարեա միշտ կապուած է եղել սովի հետ, որը այս երկրում մի սոսկալի աղէտ է, որը պարբերաբար միլիոնաւոր մարդիկ է կոտորում:

Այժմեան համաճարակը նոյնպէս առաջացած է սովից, որից այժմ տանջուում են, ինչպէս հաղորդում են 36 միլիոն ժողովուրդ: Նա հետեւանք է մի քանի տարուայ երաշ-

տութեան և այսօր անգլիական կառավարութիւնը իւր հաշուով միլիոնաւոր սովալլուներ է կերակրում:

Այս դիտումներով Հայաստանին մեծ վտանգ է սպառնում: Աղքատացած և կիսաքաղցած թէ Հայ և թէ մահմետական ազգաբնակչութիւնը հեշտութիւնով կարող է ժանտախտի ճարակ դառնալ և սրա գէմն առնելու միակ փրկարար միջոցն է նրանց ողորմելի վիճակը բարելաւելը: Համարեա նոյնը պէտք է ասել և մեր երկիր ապաւինած գաղթականների մասին: Նրանք ևս տրամադրուած են հիւանդանալու, եթէ նրանց դրութիւնը չբարելաւանայ: Բնիկ ժողովուրդը, որը աւելի ապահով դրութեան մէջ է գտնուում, պիտի օգնի ու պահպանի գաղթականներին, հասկանալով որ եթէ նրանց մէջ ընկնի հիւանդութիւնը, իրանք էլ անշուշտ կը վարակուեն: Այս պայմաններում ոչ միայն ամէն մէկի բարոյական պարտքն է բնակարան ու հաց տալ գաղթականներին, այլ այդ թելադրում է մեր սեփական շահերը: Այնպէս որ այդ թշուառներին օգնելը ոչ միայն մի առաքինի գործ է, այլ ինքնապաշտպանութեան մի միջոց է:

Յայտնի ժանտախտագէտ բժ. Հիրշը (Hirsch) ասում է. «Թող վերջապէս ամէնքը համոզուեն, որ ընդհանուրի կենցաղի բարւոքումն և կանոնաւոր հասարակական առողջապահութիւնը ամենագորեղ միջոցներն են դիմադրելու ինչպէս ժանտախտին, նոյնպէս և միւս բոլոր վարակիչ հիւանդութիւններին»:

Այս միջոցը ամէն ժամանակ պահանջել և իրագործել են բժիշկները: Տառապեալներին օգնելու գործը պիտի կայանայ յարմար և առողջ բնակարաններ յատկացնելու և ուտելիք ու խմելիք մատակարարելու մէջ: Պէտք է ձրի ճաշարաններ հիմնել, թէյարաններ բանալ, թէյ, շաքար բաժանել նրանց և ամեն կերպով աշխատել բարձրացնել նրանց սնունդը: Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել նոյնպէս և մարմնի ու հագուստի մաքրութեան վրա:

4. Ֆիզիկական ու ժամանային:

Ֆիզիկական թուլութիւնը և ուժասպառութիւնը, որը հետեանքէ չափազանց ֆիզիկական աշխատանքի, տրամադրում է նոյն-

պէս հիւանդանալու: Հասկանալի է, որ ու-
ժից ընկած, նուազած, մարդի վրա աւելի
հեշտ կազդի թոյնը, որովհետեւ նրա թուլա-
ցած կազմուածքը անկարող կըլինի դիմադրել
թոյնի աւերիչ զօրութեանը: Նոյն պատճա-
ռով պէտք է զգոյշ լինի արբեցողութիւնից,
վատ կեանքից և այլն:

Ծ. Վախը ժանտախտից:

Վախը նոյնպէս թուլացնում է մարդի
նեարգային դրութեան և հասցնում նրան:
Վախեցողը բարձի թողի է անում իւր գոր-
ծերը, վախում է ուտելուց ու խմելուց, ա-
մէն մի ջնջին ցաւ ու տկարութիւն նրան
սարսափի մէջ է քցում, նա վախճում է
մի քաղաքից միւսը և ոչ մի տեղ հանգիստ
չի գտնում: Գիշեր ցորեկ նրա միտքը զբա-
ղուած է ժանտախտով: Այսպիսիների թիւը
ահագին է համաճարակների միջոցին: Այս
չարիքի առաջը պէտք է առնել համոզելով
և ոչ երբէք ստիպողական միջոցներով: Իսկ
գրա համար հարկաւոր է ամէն ճանապարհ-
ներով տարածել ժողովրդի մէջ միշտ գի-
տելիքներ ժանտախտի մասին, հասկացնել

նրան, որ նա պէտք է սառնասիրտ և լուրջ
կերպով վերաբերուի դէպի այդ աղէտը, որ
մենք զօրեղ միջոցներ ունենք դիմադրելու
նրան, որ չպէտք է վախճել նրանից, այլ
ընդհակառակը մենք պարտաւոր ենք և կա-
րող ենք կռուել նրա հետ և այլն:¹

Այս գիտելիքները տարածելու համար
մենք մի քանի միջոցներ ունենք: Պէտք է
ցրուել ժողովրդի մէջ հանրամատչելի լեզուով
գրուած բրօշիւներ և ժողովրդին հասկանա-
լի լրագրական յօդուածների, պէտք է զրոյց-
ներ սարքել թէ քաղաքներում և թէ գիւղե-

1 Այժմ իսկ, երբ դեռ հազարաւոր վերստեր հեռու
է մեզանից ժանտախտը, մի ինչ որ տագնապ է տեղում Բա-
գուի, Բաթումի եւ ուրիշ քաղաքների մէջ, Պէտք է հաս-
կացնել ժողովրդին, որ ժանտախտը պիտի անցնի Ադուա-
նիստան, Բելուշիստան, Անգլիասպեան երկիրը եւ Պարս-
կաստան, մինչեւ որ մեղ հասնի, Բուսսաց ամբողջ սահմանի
վրայ այժմ իսկ հիմնուած են բժշկական առողջապահա-
կան հսկողական կայարաններ, վտանգաւոր տեղերի վրա
զօրք է շարուած, որ ոչ մարդ անցնի եւ ոչ ապրանք վը-
տանդաւոր երկրներից, Բարձրագոյն հրամանով կազմուած
է մի առանձին մասնաժողով ժանտախտի հետ կռուելու
համար, նախադահլութեամբ Ն. Բ. Պրէնց Աւէքսանդր Օւ-
դենբուրգսկու, Այս մասնաժողովը, որը բաղկացած է մի-
նիստերից, շատ աշխոյժով ձեռնարկել է երկրի պաշտպա-
նութեան գործին. նա արդէն արեւ է շատ կարեւոր կարգա-
դրութիւններ:

րում: Գրագէտները պիտի ժողովեն ժողովրդին կիրակի և տօն օրերը և կարգան ներանց ժանտախտի գրուածքների մասին, թարգմանելով նրանց տեղային բարբառներով: Մասնաւոր անձինք, բարեգործական և հրատարակչութեան ընկերութիւնները, վերջապէս հոգեւոր կառավարութիւնները պէտք է հոգան, որ ձրի տարածուին ժողովրդի բոլոր խաւարի մէջ ժողովրդականացրած գիտելիքներ ժանտախտի մասին: Ուրախութիւնով պէտք է ասենք, որ ժողովուրդը ահագին հետաքրքրութիւնով կարդում է այդպիսի գրուածքներ և հետեւում է խրատներին:

Ահա այն միջոցները, որոնք պէտք է գործադրուին իսկոյն և եթ:

Եթէ ժանտախտը երեւաց հարեան քաղաքներում այս գգուշութիւնները պէտք է կրկնապատկուեն և բացի այդ անհրաժեշտ է ձեռնարկել հետեւեալ միջոցներին:

Ամէն քաղաքում ու գիւղում մի կամ մի քանի տներ պիտի պատրաստել հիւանդանոցի համար, որպէս զի հնարաւոր լինի հէնց

առաջի հիւանդին այնտեղ առանձնացնել և բժշկել: Ժանտախտի համար շատ յարմար են վրանները:

Պէտք է վաղօրօք բժիշկներ և ֆելդշերներ հրաւիրել, կամաւորներ դնել հիւանդներին խնամելու համար: Պէտք է աղտահանիչ դեղերի պահեստ ունենալ (տ. Աղտահանիչ միջոցներ:)

Որչափ հնարաւոր է պէտք է կարել ամեն օրէն յարաբերութիւններ վարակուած քաղաքներէ և նոյն իսկ ամբողջ գաւառէ ու հանգի հէտ: չընդունել այդտեղերից ոչինչ. ոչ ապրանք, ոչ հին շորեր, ոչ միքը և այլն:

Քանի որ ճանճելը կարող են թոյնը տարափոխել, հարկաւոր է պաշտպանել նրանցից ուտելիքները, մանաւանդ միրքերը: Թէ տան մէջ և թէ մանաւանդ բաղարում, խանութներում, պէտք է մարլայով (աղաբանի) ծածկել միրքերը և ուտելիքը. նոյն դիտումով պէտք է խուսափել հում ուտելիքներից: Եփած ուտելիքները երկիւղալի չեն, որովհետեւ ինչպէս մենք գիտենք միկրոբը ոչ ընչանում է 60° տաքութեան մէջ: Իսկ այն նիւթերը, որոնք չի կարելի եփել, օրինակ միրքը պէտք է լաւ լուանալ ջրի մէջ: Կըլ-

պուռոզ միրքերը (տանձ, խնձոր և ուրիշները) ի հարկէ հարկաւոր է կլպել:

Եթէ ժանտախտը մտնում է գիւղ կամ քաղաք, բնակիչները չպէտք է սարսափի մէջ ընկնին, չպէտք է գլխակոր փախչին, այլ պէտք է, ժողովուրդն ու խորհրդակցեն իրանց ինքնապաշտպանութեան մասին:

Վերին աստիճանի ուշադիր պէտք է լինել դէպի ամէն տեսած հիւանդութիւն: Զ'պէտք է մոռանալ, որ ժանտախտը շատ տարբեր կերպարանքներ է ընդունում և համաճարակի սկիզբներին շատ դժուար է որոշել նրան միւս հիւանդութիւններից: Հետեւաբար համաճարակների միջոցին, ամէն հիւանդութեան համար, որքան էլ թեթեւ լինի նա, պէտք է դիմել բժշկին, իսկ եթէ իսկոյն բժիշկ չի գտնուում, պէտք է առանձնացնել հիւանդին, կամ (աւելի լաւ է) տեղափոխել նրան հիւանդանոց:

Այստեղ ես մի քանի խօսք պէտք է ասեմ հիւանդների հիւանդանոց տանելու մասին:

Բանն այն է, որ ամբողջ սաստիկ նախապաշարուած է հիւանդանոցների դէմ: Կարծում են, որ այնտեղ ուղարկում են

միայն անյոյս հիւանդներին, որ այն տեղ մտնողը այլևս դուրս չի գալիս, և ուրիշ այսպիսի անմիտ բաներ: Ժողովուրդը պէտք է վերջապէս հասկանայ, որ հիւանդանոցը տալիս է հիւանդներին այնպիսի յարմարութիւններ, որ աղքատները երբէք չեն կարող ունենալ իրանց տանը: Այնտեղ թէ սենեակը թէ ուտելիքն ու խմելիքը, թէ պահպանողական միջոցները բոլորը յարմարեցրած են հիւանդութեանը: Հիւանդները միշտ բժշկի հսկողութեան ներքոյ են գտնուում և այլն: Ժողովուրդը պէտք է հաւատարմաբար վերաբերուի դէպի հիւանդանոցները, պէտք է հասկանայ, որ հէնց միայն հիւանդի հեռացնելը տնից մի մեծ բարիք է, քանի որ հիւանդի ներկայութիւնը տան մէջ մշտական սպառնալիք է ընտանիքի միւս անդամներին: Հեռացնելով հիւանդին տնից, դրանով հեռացրած կը լինինք և վարակման աղբիւրը:

Եթէ հիւանդը տանն է բժշկուում, նրան պէտք է առանձին սենեակ յատկացնել, իսկ տնից միայն մէկը պիտի խնամի նրան և այդ խնամողը ոչ ոքի հետ չպիտի յարակցի: Հիւանդի մօտ մտնելիս պէտք է եր-

կար շապիկ և ձեռնոցներ հագնել և ամէն տեսակ զգուշութիւններ գործ դնել: Հիւանդի փոխնորգը, շորերը և իրեղէնները աւելի լաւ է այրել, իսկ այն բաները, որոնք այրել չէ կարելի, պէտք է աղտահանիչ հեղուկների մէջ լուանալ: Հիւանդի առողջանալուց կամ մեռնելուց յետոյ նրա կացարանը պէտք է աղտահանել տալ բժշկի միջոցով: Ժանտախտից մեռածների համար պիտի առանձին գերեզմանոց լինի: Դագաղը պիտի ծածկուի մի հաստ շերտ կրով:



ԱՂՏԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՅՆԵՐ:

Աղտահանութեան նպատակն է ոչնչացնել մի հիւանդութեան աղտը մի տան, մի սենեակի միջից: Ժանտախտի թոյնը զանազան կերպով կարելի է ոչնչացնել: Մի հիւանդութեան թոյնը սպանելու միջոցներն առուանուում են աղտահանիչ միջոցներ, ու այն դեղերը, որոնք գործ են գրուում թոյնը ոչնչացնելու համար, կոչուում են աղտահան կամ աղտահանիչ դեղեր:

Ժանտախտի դէմ ամենալաւ աղտահա-

նիչ միջոցը կրակն է: Ժանտախտոտ իրերը այն աստիճան երկիւղալի են, որ լաւ է ոչնչացնել նրանց, քան խնայել ու անդադար երկիւղի տակ լինել: Եթէ այրելն անկարելի է, պիտի այդ շորերը լաւ եփ տալ ջրի կամ կապոյտ քարի ջրում, յետոյ սապօնով լուանալ ու թոնրի մէջ չորացնել:

Աղտահանիչ դեղերն են:

1. Կէլը, որը ամենից յարմար և ամենից էփան միջոցն է: Նա գործ է ածուում երկու կերպ, չոր ու ջրի մէջ բաց արած:

« Զոր, «ա» կամ «աշէլ կէլը պէտք է ամէն տան մէջ լինի, գիւղերում ու քաղաքներում պիտի մեծ պահեստ ունենալ:

Զոր կիրը ցանում են ուղղակի հիւանդի արտաթորութիւնների և բոլոր աղտոտութիւնների վրայ:

Բ. Կրէ Զոր կամ կրէ կալ: Այս ջուրը շինելու համար վերցնում են մի մասը տաք կիր (չը հանգցրած) և հինգ մաս ջրի մէջ բաց անում, դառնում է կաթ, որը ածում են թէ կեղտոտութիւնների վրա և թէ արտաքնոցների հօրը:

2. Քոռոնային կէլ (ծծումը, ծծումքի հող) գործէ ածուում նոյն ձևով:

3 Կարթուլի կամ Կարթուլեան թիւս-որը պէտքէ ամէն տեղ պահուի և որից զանազան խառնուրդներ են պատրաստուում: 0րինակ 2 մասը կարթուլի — 100 մ. ջուր կամ 3 մ. կարթուլի — 100 մ. ջուր. թոյլ խառնուրդը (2 մ. — 100 մ. ջուր) կարելի է գործածել հիւանդի մօտ նստողի ձեռները լուանալու համար: Թուեղ խառնուրդները (3 մինչև 5 մ. 100 մ. ջրում) գործ են ածում կեղտոտ բաները լուանալու համար:

4. Պղնձի արջապղ (կապոյտ քար) վերցնում են 2 մ. ու հալցնում են 100 մ. ջրի մէջ: Խառնուրդով կարելի է հիւանդի իրերը լուանալ, ախտոտութիւնների վրա լցնել և այլն:

5. Երկաթի արջապղ աւելի թոյլ է, — նրանից պէտք է վերցնել 15 մ. 100 մ. ջրի մէջ: Գործածութիւնը նոյնն է:

6. Սուլեմա (սուլէյմանի) նա ամենազօրեղ ախտահանիչ մի միջոց է, որը սակայն քանի որ միւսնոյն ժամանակ սաստիկ թոյն է, գործածել կարելի է միայն բժշկի խորհրդով:

Դեղեր:

Խորհուրդ ենք տալիս ունենալ հետե-

ւեալ դեղերը հիւանդացողներին առաջին օգնութիւնը հասցնելու համար:

1. Վալերիանի կաթիլներ.
2. Հոֆմանի կաթիլներ.
3. Նաշատիր.
4. Հասարակ սպիրտ և քաֆըրի սպիրտ:
5. Օղիկօլօն, քաջախ:
6. Խինին, Անգլիական աղ, լուծողական ձէթ:

Իւրաքանչիւր սրուակի մասին մանրամասն խրատներ կը գտնուեն նրանց գործածելու մասին: Բոյց երբէք չպէտք է բաւականանալ այսպիսի դեղերով. այլ հարկ է դիմել բժշկին:



Յառաջարակ Երես
Գ.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ժանսախս 9

Ինչ է ժանտախտը. — Ժանտախտի աարածուկու
եղանակը. — Կեղտոտութիւն եւ մաքրութիւն:

Ժանսախսի պատուիրիւն 12

Ժանտախտային համաճարակները Եւրոպայում. —
սեւ մահը. — Ժանտախտի բոյնը. — Ժանտախտը թիւր-
քիւյովում, Պարսկաստանում եւ Կովկասում. — այժ-
մեան համաճարակը:

Ժանսախսի բոյնը եւ մարդի վարակուելու եղանակը. 27

Ժանտախտի թոյնը. — Երեսնի գիւտը. — Ժանտախտի
շիջուկը եւ նրա պատրաստելու եղանակը:

Ժանսախսով վարակուիլը 32

Հիւանդի իրերի վարակիչ զօրութիւնը. — օրինակ-
ներ. — Թոյնատար ապրանքներ. — Ինչ ճանապարհներով
է մտնում մեր մարմնի մէջ ժանտախտի թոյնը:

Ժանսախսի նշանները 39

Ժանտախտի արտայայտութիւնները. — Գեղձերի
բորբոքումն (բուբօն). — Կարբոնիկուլ եւ բծեր. —
Ժանտախտը թեթեւ եւ կայծակաճար դէպք է:

Ժանսախսի բժշկութիւնը 47

Ժանտախտը անբուժելի է. — մի քանի խօսք բժշ-
կութեան մասին. — Բժշկութիւն շիջուկով. — առաջին
փորձերը. — նախազգուշական պատուաստումն:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Պահպանողական միջոցներ ժանսախսի դէմ 57

Փտումն եւ կեղտոտութիւն. — Գանգէսը եւ Նեղոսը.
— Ինչպէս պէտք է կազմակերպել մաքրութեան գործը
քաղաքներում եւ գիւղերում. — Բնակարանը քաղաք-
ներում եւ գիւղերում. — Պէտք է զգուշանալ մկնե-
րից. — մոնչու. — Գաղթականներին օգնելը. — Ֆիզիքա-
կան ու ժամապառութիւնը. — վախը. — Հանրամատչելի
բրօշիւներ եւ դասախօսութիւններ ժանտախտի մա-
սին. — խորհուրդներ. երբ ժանտախտը երեւայ. —
ախտահանիչ միջոցներ. — Գեղեր:



1
4

ՀՀ Ազգային գրադարան



NL0596798

